И бездушны души ваши так!

Говорят, семья – не без урода.
Ваши ж семьи как один урод.
Вышли-то вы, может, из народа,
Да теперь – чихать вам на народ!
Вам живётся – как при коммунизме,
Ваши кресла – изобилья рог.
Чёрт возьми, ну до чего же низмен
Ваш духовно-нравственный порог!

Вы – живые трупы.
На уколах
Вам уже недолго жировать.
Но неужто это тоже –
Молох
Века,
и его не миновать?

Боже правый, хоть бы устыдились,
Пряча в воду грязные концы!
Нет, творят, творят несправедливость
Общей «справедливости» творцы.
А несправедливость как бесправье,
Пострашнее ссылок и тюрьмы.
От душевных травм,
от злобной травли
Погибали лучшие умы.

Неподкупным – им не доверяли.
(Молох века, как ты многолик!)
Скольких мы товарищей теряли?!
Скольких мы теперь теряем их?!

Не ищу я в прошлом параллелей,
Но спрошу, уж коль начистоту:
Маяковского не так ли съели
И не так ли Зощенко – ату?
И не так ли был убит Есенин?
И не так ли…
Впрочем, не скажу.
Отхожу от этих потрясений,
Как от страшной пьянки отхожу.

Год 1990-й

Вот такие написал я строки
Десять лет назад.
Не впопыхах.
Только всё равно сказались сроки –
Устарело многое в стихах.

Впрочем, как и в жизни устарело.
Нынче взял бы я повыше ГОСТ,
Не метал бы в каудилий стрелы –
Слава богу, век божков – того-с…

О «делах», о тех, о «персональных»,
Говорить мне тоже не резон.
К счастью, нет сейчас имён опальных,
Нет запретных тем,
запретных зон.

Что же, время… А оно как бремя:
И несладко, а несём, несём…
Может статься, о Нечерноземье
Напишу я «чистый чернозём» -
И не завирая, не лукавя,
Не из страсти что-то воспевать.
Просто жизнь – штуковина такая,
Что за ней непросто поспевать.

...Да, в стихах поры «времен застойных»
Не всему остаться суждено,
Но сказать бы надо о застольях
И о звездопадах орденов.

⊃12

11⊃

О разоре нашем. О позоре.
Сколько нам вставляли разных клизм:
Что ж вы, мол, бедуете, построив
Свой (да развитой!) социализм?!

Я не оборвал бы фразу нынче:
«И не так ли… Впрочем, не скажу…»
И теперь скажу: и Солженицын
Мерен по тому же метражу.
Сахаров и кто-то по соседству
Что тореадоры для быка.
Неужель и вправду лучше средства –
«Не пущать!» - не найдено пока?

...Память вновь напомнила о прошлом
Хрустом
по живому
топора.
Будь же ты вовек и присно проклят,
Молох века – символ недобра!
Я продлю реестр стыда и срама
(Пусть меня за это покостят!).
Не простят Америке Вьетнама,
Нам Афганистана не простят.
И какие б цели в оправданье
Мы ни называли,
Ту войну
Видим всё правдивее с годами,
Чувствуем полней свою вину.

Как напоминание о плахе,
Станет и для будущих времён
То, что приключилось в Карабахе, -
Рознь и распри наций и племён.

Нет, не вняли...
И по той же схеме,
Что лишила мира Карабах,
Действуют теперь уже в Узгене
И в других нагорных городах.

В том реестре – три болезни века:
Пьянство, наркомания и СПИД.
Век грядущий этого «успеха»
Нашим поколеньям не простит.

Не приемля то, что раньше пелось,
И последних митингов тщету,
Не простим себе свою же бедность,
В том числе и духа нищету.

И, конечно, строчкою особой,
Воплощеньем полновластья зла
В том реестре значится Чернобыль,
Раскаливший Землю добела.

Есть еще один Чернобыль.
Тихо,
Мягко опустившись на Арал,
Молох века, это ты, поди-ка,
Те края бесстыже обокрал?

Молох, ты, естественно, не олух.
Мудрый чересчур, наоборот.
Почему ж ты опускаешь, Молох,
Молот
на истерзанный народ?
Мы, конечно, тоже виноваты,
Но не меньше и твоей вины
В том, что мы, мифически богаты,
Столь же и мифически бедны;
Что, добры и милосердны генно,
Нахватавшись дури от жлобья,
Превратились (ясно, не мгновенно)
В противоположных тех себя.

Молох века, ну скажи на милость,
Где с тем джинном недобра сосуд,
С джинном, что принёс непримиримость,
Нетерпимость, низверженья зуд?
Как же мы обрушились пальбою
На своих отцов и праотцов!
Это ж мы смеёмся над собою,
По себе же бьём, в конце концов!
С каждым днём все громче эти залпы,
И чем громче залпы – тише я.
Я теперь и Сталина не стал бы
Костерить.
Не я ему судья.
Нынче жлобство – во какого роста!
Это чтоб заметней быть в толпе.
Но ведь есть примеры благородства,
Молох,
Но они не по тебе.
Неудобных не приемлет Молох.
Ведь без них спокойней. Благодать!
Так вот и растим коров комолых,
Чтоб, избави Боже, не бодать.

Я, наверно, той же болью болен,
Что живёт в душе моей свербя,
Но, поверьте, каждодневно, с боем
Вышибаю жлобство из себя.

И не только жлобство.
Вышибаю
Трусость, отвращенье к терпежу…
Потому, быть может, выживаю.
Потому, быть может, и пишу.

Год 2000-й

И ещё одно десятилетье –
Не прошло - промчалось, пронеслось,
За собой оставив как наследье
Боль,
разруху,
безнадёгу,
злость.
Но вернёмся чуть назад. К началу
90-х пагубных годов.
Чтоб корова чья-то не мычала,
Календарь перелистать готов.

91-й.
С прежним годом
Сравнивать, пожалуй, и боюсь.
Развалился с грохотом и громом
Нерушимым звавшийся Союз.

Год прошёл, а мы – в другой эпохе.
Что – эпохе! – мы в другой стране.
Вспоминая суетно о Боге,
Действуем вполне по сатане.
Флаг, что над Кремлём алел парчово,
Спешно заменён на триколор.
Тут недобрым словом Горбачёва
Вспомню,
в мыслях вызвав на ковер.
(Вызвать надо бы назад лет десять:
Фергана, Чернобыль, Карабах…
Впрочем, можно на него повесить
И ещё десятка два собак.)

- Ну, так что ж вы, Михаил Сергеич,
Натворили?
Каетесь иль как?
- То, что сотворил я - не евреи! -
Памятью останется в веках.

- Несомненно.
Геростратов помнят.
Сатаною меченых – стократ.
Многими ли только будет понят
Новых дней бездарный Герострат?

Начиналось-то окейно, классно,
Только всё – похожее на фарс:
Перестройка. Ускоренье. Гласность –
Будто кто-то дал команду «фас!»

А уж если говорить про август
С путчем – как его? – ГКЧП…
Сами ведь сфабриковали пакость –
Родине, товарищам, себе?

- Ну уж что случилось, то случилось…
- Хватит! Это ж фарисейства верх!
Знайте же – пардон за неучтивость –
Нет вам оправдания вовек!

…Вот такое сотворили дельце
Горбачёв и те, кто был при нём.
Вы, конечно, спросите: «А Ельцин?»
Ельцин тоже. Но о нём потом.

Да, такой он, 91-й,
Год пройдох, предателей, хапуг.
Кто-то вышел весь в павлиньих перьях,
Кто-то – как общипанный петух.

…Год ещё минул. Страна дрожала,
Области не слушались Москву.
Некогда великая держава
Стала жалкой, слабой – шов на шву.
Цены скачут что ни день, а Ельцин
(Вот он, Ельцин! На лихом коне!)
Клялся, что, мол, ляжет сам на рельсы,
Коль продукты вырастут в цене.

Выросли.
Не вдвое и не втрое –
В сотни раз,
нас сделав голытьбой.
Он же хоть бы хны – герой героем!
Правда, говорят, ушёл в запой.
Сей приём им отработан. Мастер
Спирта!
Мастер спорта вроде тож.
Равного по той и этой части
В президентских креслах не найдёшь.
…93-й год,
вошедший
В летописи современных лет
Годом, в коем некий сумасшедший
Расстрелял Верховный свой Совет.
Этим неким был, конечно, Ельцин,
Подлинный в России демократ.
Долго после северокорейцы
Хлопали в ладоши:
«Вот
наш
брат!»

…Календарь листать устал.
Извольте
Сами, если надо, полистать.
Только лишь напомню о дефолте,

⊃13

12⊃

Вновь нас обокравшем, словно тать.
А ещё я о Чечне напомню,
Где мы оказались как в дерьме.
За одно за это лишь
По полной
Оттрубить бы Ельцину в тюрьме!
…Снова в год 2000-й. В сегодня
Возвращаюсь – будто бы назад.
Где мы были?
Если в преисподней,
То сегодня, безусловно, ад.

Всё перевернулось – подлость, слава.
Прежние кумиры – разом вдрызг.
Был горисполком, теперь – управа,
Были песни, нынче – хрип да визг.
Предпочтенье - похоти и плоти.
Алый стяг в России – как в гостях.
Киллеры и дилеры – в работе,
Без работы – столько работяг!
В городах заводы, стройки стали,
В «челноки» пошёл рабочий люд.
Если встретишь где пацаньи стаи –
Убегай:
не ровен час, прибьют.

И деревни пали с тем же треском,
Что и вся Российская земля.
Заросли бурьяном и подлеском
Прежде хлеб рожавшие поля.
Улыбаться разучились люди –
Их сердца от горюшка черны.
Этого разора, этой люти
Мы не знали со времён войны.
Повсеместно слышим охи-ахи -
Воют наши матери-отцы.
Но зато жируют олигархи,
Покупая яхты и дворцы.

Десять лет назад я громогласно
Сплавил каудилий на погост,
Написав в пылу энтузиазма:
«Слава богу, век божков – того-с…»
А они –
поди ж ты - жив курилка! –
Прут, как тараканы из щелей.
Нагло,
многолапо,
многолико
Ползают по Родине моей.

Скажут мне:
а что ж вы сами, сами?
Соглашусь:
да, справедлив упрёк.
Все страданья, что случались с нами, -
Беды, муки, боли – нам не впрок.
Слушаем друг друга как глухие.
Времена и власти матеря,
Августа хотят одни,
другие –
Третьего – по счёту – октября.

Что-то с нами станет,
что-то будет?
Ждём, «когда закончится дурдом»?
Кто разбудит нас?
Быть может, Путин?
Дай-то бог.
Но верится с трудом.

…Молох века,
Может быть, довольно?
Есть всему и срок свой, и предел.
Ты и так России сделал больно.
Или ты не этого хотел?

Век двадцатый,
Вот уж скоро финиш.
С чем, каким ты, век, к нему придёшь?
Что из нажитого ты покинешь,
Что ещё в пути приобретешь?

Я молю:
Во имя человека,
Чтоб излишних он не знал забот,
Пусть недобрый гений – Молох века -
Как исчадье ада, изыдёт!

1980-2000 гг.



НАША СПРАВКА

Алексей Золотин – автор изданных в Калуге, Туле, Москве поэтических сборников «Верю в доброту», «Любимые», «Люблю и верую», «Орбиты сердца», «Между Жиздрой и Угрой», «С любовью. Автор» (две книги) и ряда других.

Печатался в журналах «Наш современник», «Огонек», «Смена», «Советский моряк», «Пограничник», «Гражданская авиация».

Член Союза писателей России. Живёт в Калуге.

От автора

Когда в 1980 году из меня единым выдохом выплеснулась первая часть «Молоха», я и думать не думал, что она потребует своего продолжения. Но последующая жизнь оказалась столь бурной, непредсказуемой, противоречивой, что сдержать поток впечатлений не было никакой возможности. Так первоначальное стихотворение приросло главами «Год 1990-й», а затем «Год 2000-й», превратившись в поэму.

Первые две главы в своё время публиковались в периодической печати, а третью и поэму в целом печатать я не спешил. И дело не в том, что ещё были живы главные «герои» описываемых событий (большинство из них живы и сейчас) и мне не хотелось их обижать, а в том, что требовалось время, чтобы убедиться, прав ли я в своих оценках.

«Молох» я показывал своим друзьям, понимающим толк в жизни, в политике, в поэзии. Отзывы были разные. От *«это гениально, сколько тонких наблюдений, россыпь афоризмов!»* до *«это странички рифмованных социально-политических взглядов, сегодня уже полностью устаревших… Теперь всё видно гораздо глубже, точнее, страшнее и т.д.»*.

Не обольщаясь комплиментарными откликами, тем не менее, и с подобной критикой не вполне соглашусь. Да, сегодня о 1980-м, 1990-м и даже о 2000 годах, наверно, можно было бы написать по-другому (и я в каждой из последующих глав, не стыдясь признавать свои ошибки, делаю на этот счет оговорки: *«Вот такие написал я строки десять лет назад. Не впопыхах. Только все равно сказались сроки – устарело многое в стихах»; «Я теперь и Сталина не стал бы костерить. Не я ему судья»; «Десять лет назад я громогласно сплавил каудилий на погост… А они – поди ж ты – жив курилка! – прут, как тараканы из щелей…»),* но я ничего не стал менять из написанного **именно тогда** – в 80-м, 90-м, 2000-м. Понимаю, что местами пришлось обходиться скороговорками, зафиксировав, может быть, лишь тысячную часть того, что заслуживало фиксации, но иначе надо было бы замахиваться на роман в стихах, не меньше, к чему я пока не готов.

И ещё одно уточнение. Эти наблюдения, впечатления, выводы – **мои**. Каждый другой, по-видимому, обратил бы внимание на что-то ещё и заключения сделал бы иные. Я с пониманием отнёсся бы к этому. И жду такого же понимания от читателей. Написанное – не фактология бесстрастного летописца, не мемуары, замешанные на личном участии в происходящем, а попытки поэтически-публицистическими средствами отразить **своё** представление о том, что совершено в нашей стране в последние десятилетия.



В Калужской области диаспоры устроили совместный вечер

Праздник дружбы народов «Наш дом – Калуга»















Праздник с участием диаспор (Армении, Грузии, Украины, национальных объединений Дагестана, Татарстана, Афгано-Таджикской межнациональной общины «Бахтар»), проживающих в Калужской области. Межнациональная встреча была посвящена 65-летию Победы над фашистской Германией, Году учителя, Дню международной солидарности трудящихся. В программе мероприятия: большой концерт, выставка прикладного, изобразительного искусства и дегустация блюд национальной кухни, чествование ветеранов ВОВ, учителей и действующих спортсменов.

ՄԵԶ ՀԱՆԳԻՍՏ ՉԵՆ ԹՈՂՆԻ



Հայ-թուրքական բանակցային գործընթացի առկախումը՝ «սառեցումը», որ հայկական կողմի նախաձեռնությունն էր ապրիլի 24-ի նախօրյակին՝ պայմանավորված Թուրքիայի՝ ժամանակ ձգելու քաղաքականությամբ, ինչպես նաև ռուս-թուրքական հերթական մերձեցումն ու ՌԴ նախագահ Մեդվեդևի այցը Թուրքիա մի շարք հարցեր են առաջ քաշել:

Առաջին հերթին պետք է հասկանալ, որ մենք գործ ունենք նոր Թուրքիայի հետ: Սա արդեն քեմալական Թուրքիան չէ, այլ իր ինքնությունը օսմանյան անցյալում փնտրող պետություն: Զուր չէ Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն հայտարարում, որ ժամանակակից թուրքերը նոր օսմաններ են: Թուրքիայի իշխող վերնախավի այս նոր ընկալումից էլ բխում է այսօրվա Թուրքիայի արտաքին քաղաքականությունը, որը ձգտում է լինել-դրսևորվել բոլոր այն տարածքներում, որոնք ժամանակին եղել են Օսմանյան կայսրության սահմաններում՝ Բալկաններ, Մերձավոր Արևելք, Կովկաս: Սա հենց այն քաղաքականությունն է, որից հրաժարվել էին քեմալականները՝ գիտակցելով, որ Թուրքիան չունի աշխարհաքաղաքական խոշոր խաղերին մասնակցելու անհրաժեշտ ներուժն ու ռեսուրսները: Եթե քաղաքական այս վերնախավը դեռ երկար իշխի Անկարայում, մենք ականատեսը կդառնանք Թուրքիայի լուրջ թուլացման, հնարավոր է անգամ, որ Թուրքիան կանգնի փլուզման եզրին: Այս առումով Ռ. Թ. Էրդողանը հիշեցնում է Միխայիլ Գորբաչովին, որն ուզում էր վերակառուցման տարիներին գլխավոր դերը խաղալ միջազգային բեմահարթակում, բայց չուներ դրա համար ռեալ ռեսուրսներ, քանզի դրանք արդեն վատնել էր ԽՍՀՄ-ը: Թուրքիան, գիտակցելով, որ «սառը պատերազմը» ավարտվելուց հետո իր նշանակությունն Արևմուտքի համար նվազել է, փորձում է այլընտրանք գտնել: Թուրքիայի իշխող վերնախավը լրջորեն հավատացել է Օսմանյան կայսրության վերակենդանացման հնարավորությանը: Բայց դա սոսկ երազանք է առանց գործունեության որոշակի ծրագրի:

Թուրքիայի նոր օսմանականությունը առաջին հերթին նշանավորվեց հարաբերությունների կարգավորման փորձերով Հայաստանի, Սիրիայի և հարևան մյուս այն երկրների հետ, որոնց հետ նախկինում չլուծված հիմնախնդիրներ է ունեցել: Նմանատիպ մի փորձ Թուրքիայում արել էին նոր օսմանները՝ բուրժուական-ազատական շարժման ներկայացուցիչները, 19-րդ դարի երկրորդ կեսին: Նրանք ջանում էին փրկել արդեն քայքայվող Օսմանյան կայսրությունն այն իրավիճակում, երբ մեծ պետությունները սկսել էին օգտագործել Թուրքիայի տարածքում ապրող ազգային փոքրամասնություններին իրենց նպատակների համար: Արդյունքում Օսմանյան կայսրությունը կործանվեց, ու նրա փլատակների տակ մնաց 1, 5 միլիոն հայ: Հայ-թուրքական գործընթացում, հանգամանքների բերումով, բոլոր կողմերի շահերը համընկան: Միացյալ Նահանգները շահագրգռված էր (թեպետ, ինչպես ցույց տվեցին իրադարձությունները, ոչ այնքան) փաստաթղթերի վավերացմամբ, քանի որ նրանց ձեռնտու էր հայ-թուրքական սահմանի բացումը և հետագայում Հարավային Կովկաս թափանցելու հնարավորությունը: Եվրամիությունը նույնպես շահագրգռված էր՝ ապացուցելու համար, որ եվրոպական գաղափարը, որով առաջնորդվում է թուրքական կառավարությունը, կարող է փոխել աշխարհաքաղաքական իրավիճակը:

Ռուսաստանը, որ վրացական պատերազմից հետո կտրված էր մնացել տարածաշրջանից, ուզում էր ցույց տալ աշխարհին, որ ինքն էլ է խաղաղասեր, և, միաժամանակ, առաջարկել Թուրքիային ստեղծելու մի տանդեմ, որը կվերահսկեր ողջ Կովկասը և կհանգեցներ Վրաստանի լիակատար մեկուսացմանը: Ըստ էության, Ռուսաստանի նախագահի կատարած այցը Թուրքիա այդ քաղաքականության շարունակությունն էր: Թեպետ մեծ հաշվով ոչ ռուսներին, ոչ թուրքերին այդ տանդեմը պետք չէ: Յուրաքանչյուրը ցանկանում է տարածաշրջանը վերահսկել միայնակ, մանավանդ որ կան խաղի նոր մասնակիցներ, ինչպես ԱՄՆ-ը և ԵՄ-ը, որոնց անտեսել անհնար է:

Հայաստանի համար դրական էր այն հանգամանքը, որ հայ-թուրքական հարաբերությունների փակ շղթան ի վերջո պետք է ճեղքվեր, և դա տեղի ունեցավ «սառեցված» արձանագրությունների շնորհիվ: Այլ հարց է, որ արձանագրությունների մանրամասները, ինչպես, ասենք, 1915 թ. Ցեղասպանության հարցով պատմաբանների հանձնաժողովի ստեղծումը, կարող էին դժգոհությունների տեղիք տալ: Բացի այդ Թուրքիան այդ արձանագրությունների շնորհիվ ստանում էր 1921 թ. Կարսի պայմանագրի վավերացումը, որը Հայաստանի համար կապիտուլյացիոն բնույթ ուներ: Կար և շարունակում է պահպանվել այն բանի հավանականությունը, որ Ռուսաստանը, ի հաշիվ Հայաստանի, Թուրքիայի հետ մի գործարք կկնքի, որը կներառի ոչ միայն բազմամիլիարդանոց էներգետիկ նախագծեր, այլև թույլ կտա ստեղծելու Ռուսաստան-Թուրքիա-Սիրիա-Իրան ռազմավարական առանցքը, որը ճանապարհ կբացի դեպի Մերձավոր Արևելքի շուկաներն ու պաշարները, նաև Ադրբեջանում իր ռազմական ներկայությունը հաստատելու հնարավորություն կտա Ռուսաստանին: Դրա գինը կարող է լինել Լեռնային Ղարաբաղը, հետագայում նաև՝ Հայաստանի ճակատագիրը: Մենք պարզապես կհայտնվենք ծուղակում, կդառնանք ռուս-թուրքական պրոտեկտորատ, ինչպես արձանագրված է 1921 թ. Մոսկովյան և Կարսի պայմանագրերում:

Ի սկզբանե պարզ էր, որ Թուրքիան չի վավերացնի պայմանագրերը, քանի դեռ լուծված չէ Լեռնային Ղարաբաղի հարցը: Այժմ Անկարան բարձրացնում է նաև Նախիջևանի խնդիրը, որտեղ մտադիր է ռազմական հենակետ ստեղծել: Միաժամանակ, Արևմուտքի համար Թուրքիայի արևելյան սահմանները շարունակում են բաց հարց մնալ, ինչի վկայությունն է նույն Նախիջևանի հանդեպ ԱՄՆ-ի ցուցաբերած հետաքրքրությունը: Արևմուտքը չի կարող թույլ տալ, որ Ռուսաստանն ու Թուրքիան միասին ղեկավարեն Կովկասը. այնուամենայնիվ, բոլշևիզմի և քեմալիզմի ժամանակները անդառնալիորեն անցել են: Ուստի արձանագրությունների քարկոծման ամենաշահագրգիռ կողմը դարձավ Վաշինգտոնը, և հենց Հայաստանի նախագահի Վաշինգտոն կատարած այցին հաջորդեց գործընթացի «սառեցման» մասին հայտարարությունը:

Պետք է հիշել, որ Թուրքիան ունի առավել լուրջ խնդիրներ, քան Հայկական հարցը: Իրաքից ամերիկյան զորքերի դուրսբերումը, որը կսկսվի օգոստոսին, կդառնա նաև Իրաքի հյուսիսում քրդական պետության ձևավորման սկիզբը, որը անմիջական վտանգ կներկայացնի Թուրքիայի համար: Միաժամանակ, Սպիտակ տունը չի ցանկանում, որ տապալվի Ցյուրիխի արձանագրությունների վավերացման գործընթացը: Այնպես որ չի բացառվում, որ մոտ ապագայում հայ-թուրքական արձանագրությունների գործընթացը վերսկսվի: Ընդ որում, ցանկալի տարբերակը կլինի պարզապես դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին արձանագրությունների ստորագրումը առանց նախապայմանների, «պատմական» հանձնաժողովների ու վավերացման (ինչպես և ընդունված է դիվանագիտական պրակտիկայում, նման արձանագրությունները երբեք չեն վավերացվում):

Այժմ ամեն ինչ կախված է ճիշտ խաղից: Այսօր մեզ ներկայացել է գրագետ գործելու, «սալի ու կռանի» արանքից հաջողությամբ դուրս գալու հերթական հնարավորությունը: Եթե մեր քաղաքական ուժերը նույնպես լինեն գրագետ և ոչ ավանդական մտածողությամբ օժտված, խաղի նման ելքի մեր հնարավորությունները նկատելիորեն մեծ կլինեն, այլապես ստիպված կլինենք, ցավոք, դարձյալ հույսը դնել արտաքին գործոնների վրա: Ասենք, եթե Կրեմլի այսօրվա ղեկավարությունը, այնուամենայնիվ, պրագմատիկ գտնվի և տուրք չտա Անկարայի նորօսմանյան նկրտումներին, այլ ընթանա ԱՄՆ-ի և ԵՄ-ի հետ մերձեցման ուղիով (նման միտումներն այսօր ակնհայտ են. ասենք, Ամերիկա-Ռուսաստան հարաբերությունների «վերաբեռնումը», որն ուղեկցվում է Մեդվեդևի վարչակարգի նկատմամբ Օբամայի վարչակարգի բարի կամքի դրսևորման ցույցերով), ապա այդ դեպքում Հայաստանը կարող է պահպանել

➲16

15➲
իր առավելությունները և իր դիրքը գալիք փոփոխություններում:
Եվ պետք է մշտապես հիշել. «գործընթացը» ընդհանրապես չի կարող «սառեցվել», խաղաղ կյանք չկա և չի կարող լինել, այն էլ այսօրվա աշխարհում, որը հայտնվել է քաղաքական, տնտեսական ու բարոյական խոր ճգնաժամում, որից դուրս գալու համար անհրաժեշտ են փոփոխություններ, այն էլ չափազանց արագ: Եվ ոչ Հայաստանին, ոչ էլ մեզ՝ նրա քաղաքացիներին, ոչ ոք հանգիստ չի թողնի:

Դավիթ ՋՈՐՅԱՆ

Միքայէլ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ

21 ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ

այսօրվա եւ վաղվա

1. - Ի՞նչ է ազգը:
1. - Ազգը բանականության և հոգեկերտվածքի կերպ է, բնազանցական (մետաֆիզիկական) ընդհանրություն. այն «լավ» կամ «վատ» լինել չի կարող. այն կարող է կա՛մ լինել, կա՛մ չլինել:

2. - Ո՞րն է հայ ազգը:
2. - Հայ ազգը բանականության և հոգեկերտվածքի այն կերպն է, որը կանոնակարգվել է Հայկական լեռնաշխարհի թելադրանքներով, մտածողության և հոգևոր ներաշխարհի ամփոփում հայոց լեզվով:

3. - Ի՞նչ է ժողովուրդը:
3. - Ժողովուրդն ազգի նյութեղենացած այն հատվածն է, որը գոյում է ժամանակի մեջ. ժողովուրդը, որ միաժամանակ ապրող մի քանի սերնդի ամբողջություն է՝ ազգ շղթայի՝ միմյանց ագուցված օղակներից, կարող է մարմնավորել իր ազգի էության այս կամ այն կողմերը, լինել կենսունակ կամ անպիտան, ժառանգականությամբ ապահովել ազգի լինելությունը կամ իր խեղմամբ դատապարտել ազգը չգոյության:

4. - Ո՞րն է հայ ժողովուրդը:
4. - Հայ ժողովուրդները շատ են: Մի հայ ժողովուրդ կարող էր Էրեբունի կառուցել ու պաշտել իր նախապապերին, մեկ այլ հայ ժողովուրդ կարող էր ստեղծել Տիգրան Մեծի կայսրությունը, մյուսը՝ ընդունել քրիստոնեությունը, մեկ այլը՝ արարել հայոց ներկա այբուբենը, մեկ ուրիշը՝ ստանալ պետականություն ու կորցնել այն... և այսպես շարունակ: Երկրորդ հազարամյակի վերջի հայ ժողովուրդն աղոտ ժառանգորդն է ամբողջ նախընթացի, քրիստոնյա է, մուսուլման, աթեիստ, մովսեսական... հայախոս, ռուսախոս, անգլախոս... հայրենաբնակ, տարագիր, արժեքային քաոսային հակահամակարգի մեջ: Կկարողանա՞ կենսունակ լինել հայ ժողովուրդն իր այսօրվա հարևան և աշխարհի այլ ժողովուրդների շարքում՝ կունենա արժանապատիվ Կյանք, չի՞ կարողանա՝ միանգամից կամ աստիճանաբար կվերանա՝ իր հետ չգոյության տանելով հայ ազգը, որի կրողն է ինքը: Գոյության և զարգացման բնատուր, աստվածատուր իրավունքը կենսունակ հանրույթներինն է: Զարգացումը և հավասարակշիռ բացվածությունը նորի հանդեպ՝ կենսունակ ժողովուրդների հատկություններն են:

5. - Ո՞րն է հայ ազգի կրոնը:
5. - Ազգը կրոն ունենալ չի կարող: Կրոններ որդեգրում և դրանցից հրաժարվում են ժամանակի մեջ գոյող ժողովուրդները: Ե՛վ հեթանոս, և՛ քրիստոնյա, և՛ այլահավատ ու անհավատ հայերի համար ընդհանուրը բարեպաշտությունն է, լույսի ընտրությունը. այսօր հայ-առաքելականներից շատ՝ կան անհավատ (աթեիստ) ու տարահավատ հայեր: Այս կտրվածքում պետք է շեշտադրել ոչ թե սրանց բաժանող, այլ ընդհանրացնող հանգամանքը, որն է՝ բարեպաշտությունը, լույսի ընտրությունը:

6. - Ի՞նչ է հայրենիքը:
6. - Հայրենիքը եռաստիճան համակարգ է. կան նյութական, բանական և հոգևոր հայրենիքներ. ճշմարիտ Հայրենիքը սրանց ամբողջությունն է:

7. - Ո՞րն է հայի հայրենիքը:
7. - Նյութական հայրենիքը (մայր հայրենիք) այն կենսատարածքն է, որն ընկալվում է որպես իր եռաստիճան կամ այդ աստիճաններից մեկում գոյող ես-ի գոյավորման բնօրրան, որտեղ, Աստծո կամոք, հնարավորություն է տրվել կառուցել իր Մեծ Տունը՝ պետականություն ունենալ. նյութական հայրենիքը հայի համար Պատմական Հայաստանն է. խեղման պարագայում ոմանք այն չունեն՝ բավարարվելով «Որտեղ հաց՝ այնտեղ կաց» բացառապես կենսաբանական մակարդակի բնազդով: Բանական հայրենիքն այն տարածական և իրավական համակարգն է, ուր սեփական մշակութաբանական կերտվածքին (գենետիկ կոդին) հարազատ՝ առավել ներդաշնակ զարգացում կարող է ապահովվել. բանական հայրենիքը հայի համար Հայաստանի պետությունն է. ոմանք այն չունեն՝ բավարարվելով առաջին մակարդակի՝ նյութական հայրենիքով: Հոգևոր հայրենիքը չի սահմանափակվում ո՛չ տարածության, ո՛չ ժամանակի մեջ, այն ոչ մի կողմից սահմաններ չի ճանաչում. Հոգևոր հայրենիքը, բնականության և ներդաշնակության դեպքում, խարսխվում է առաջին և երկրորդ մակարդակների հայրենիքների վրա, այլապես անհատը սեփական պետության մեջ կարող է և իրեն վտարանդի զգալ: Այս երեք հայրենիքների՝ կենսատարածք, պետություն և հոգեկանություն, բրգաձև կառույցն է ճշմարիտ Հայրենիքը և, ամբողջության մեջ, կապ չունի հարատև կռվի կամ պացիֆիզմի, աջի կամ ձախի ու նման բաների հետ. ամբողջության մեջ Հայրենիքն առաջին հերթին բովանդակություն է, նաև՝ ներքին ձև և ոչ սոսկական ձև:

8. - 1915-ին հայ ժողովուրդը ենթարկվեց ցեղասպանության. ո՞վ է հայի թշնամին:
8. - Հայը, ինչպես և նորմալ որևէ այլ ժողովուրդ, չի կարող թշնամի ունենալ: «Թշնամին» թուլացնելու, հիվանդացնելու համար ստեղծված իռացիոնալ դրույթ է: Ժողովուրդների և դրանով՝ ազգերի գոյության պայքարի ձևերը հաճախ են ընդունում բարբարոսական բնույթ. հաղթում են, գոյատևման իրավունք են ստանում պայքարի մեջ առավել կենսունակները: Ըստ այդմ՝ թուրքերը և բոլոր ժողովուրդները մեզ և միմյանց համար ոչ թե թշնամի, այլ մրցակիցներ են: Նույնիսկ պայքարի և հաղթանակի տրամաբանությունը չի հանդուրժում «թշնամի» ու «բարեկամ» կատեգորիաները. նման ձևակերպումներն արդարացվում են միայն սեփական շահին ծառայեցնելու դիրքերից՝ ժամանակի փոքր կտրվածքում (պատերազմների ընթացքում և այլն): Չկա՛ թշնամի՝ կա մրցակից, չկա՛ բարեկամ՝ կա դաշնակից: Եվ սրանցից ոչ մեկը հավիտենական լինել չի՛ կարող: Պատմության ընթացքում բազմիցս «թշնամու» կարգավիճակում հանդես եկած պարսիկներն այսօր մեր «բարեկամն» են, հույները, ասորիները՝ ևս, իսկ մեր «թշնամիներից» շատերը՝ խեթեր, մարեր, քուշաններ և այլն, այսօր չկան, և մենք նրանց չենք «ատում»: Կնշանակի՝ պատմության ընթացքը սերը կամ ատելությունը չեն առաջնորդում, այլ շահը: Շահում են նրանք, ովքեր լուրջ չեն ընդունում և ընդամենը խաղարկում են այդ «բաժանումները», ովքեր ժամանակին և ճիշտ են կատարում մրցակցային և դաշնակցային վերադասավորումները: 1915-ը պատմության դաժան, միևնույն ժամանակ օրինաչափ ապտակն էր իմունոհամակարգի խեղում ապրող հայությանը, իսկ խեղումը հասուն քաղաքական համակարգային մտքի և կազմակերպված հասարակության բացակայությունն էր: Պետություն ունեցող որևէ ժողովուրդ առ այսօր ցեղասպանության չի ենթարկվել. ցեղասպանություն իրականացվում է բացառապես պետություն չունեցող ժողովուրդների հանդեպ: Պետություն ունեցող ժողովուրդները վատթարագույն դեպքում պատերազմում են միմյանց դեմ, իսկ պետություն չունեցող ժողովուրդների համար պատերազմն էլ է շռայլություն համարվում՝ նրանց պարզապես ցեղասպանում են (սպիտակ թե կարմիր՝ էական չէ): Մեծ եղեռնը մեր ազգային ողբերգությունն է, և չի կարելի թույլ տալ, որ այն մանրադրամ դառնա ուրիշների առևտուրներում:

9. - Ի՞նչ է Ազատ, Անկախ, Ծովից-ծով Հայաստանը, ո՞րն է Հայ դատը:
9. - Դա հայ ժողովրդի հիմարացնելուն ծառայող պաթետիկ բառակույտ է, չհամակարգված մտածողության և արժեքային քաոսի արդյունք: Ամեն ժողովուրդ բարոյական և օրինական իրավունք է ստանում խաղի մասնակից լինել միայն անկախություն՝ պետություն ունենալու դեպքում: Այսօր 50 միլիոնանոց, մեծ մշակույթ ու հոգևոր հսկայական ժառանգություն ունեցող տիբեթցի ժողովուրդը, մեզ հարևանող 30-40 միլիոնանոց քուրդ ժողովուրդը և ուրիշ շատերը՝ պետություն չունենալու պատճառով, օրինակ, ՄԱԿ-ում ձայն չունեն, մինչդեռ 2-3 միլիոնանոց Հայաստանը, Վրաստանը, Կարիբյան ավազանի՝ մեր հնացած պատկերացմամբ միասնական ազգ չձևավորած պետությունների նույնալեզու, նույնահավատ ու նույն մշակույթն ունեցող բնակիչներն իրենց պետություններով ՄԱԿ-ում հանդիսավորապես ներկայացված են: Համաշխարհային քաղաքակրթության մեջ ամեն ժողովրդի այցեքարտը ոչ թե նրա ներդրած երբեմնի հոգևոր գանձերն են, այլ կենսունակության բարձրագույն ցուցիչ պետականությունը. սա պետք է գիտակցվի, որքան էլ հայ ժողովրդի ինքնբույր պատկերացումներին չհամապատասխանի ու ռոմանտիկորեն ցավալի լինի:
Այն, ինչը ժողովուրդների համար կոչվում է անկախություն, անհատի համար անվանվում է ազատություն: Բոլոր այն թեկուզև անկախ պետությունները, որտեղ քաղաքացին ազատ չէ, դատապարտված են կործանման: Թեկուզև ժողովրդավարությամբ փետրազարդված՝ բռնապետական համակարգերը վերանալու

➲17

16➲

են օրինաչափորեն: Հայաստանը եթե նույնիսկ դառնա տարածաշրջանի ամենաhզոր բանակը, ամենազարգացած, բայց ամբողջատիրական տնտեսություն ունեցող պետությունը, միևնույնն է՝ կկորցնի իր գոյության ու ճշմարտապես զարգացման միակ հիմնական կռվանը՝ պետականությունը, եթե քաղաքացին ազատ չլինի: Հայաստանը երրորդ հազարամյակի առնվազն սկզբին՝ ազատությունից բացի այլընտրանք չունի: Ազատության մասին հնարավոր է խոսել, երբ առկա է առաջին պայմանը՝ անկախությունը: Այսինքն՝ ոչ թե ազատ-անկախ, այլ՝ անկախ և ազատ:

Հայաստանը «ծովից-ծով» եղել է միայն 1-2 տասնամյակ՝ Տիգրան Մեծի թագավորման միջնամասում: Ամեն ժողովուրդ ունի այնքան տարածք, որի արդյունավետ վարման և պաշտպանության իր արժանավորությունն ապացուցել է շրջապատող ժողովուրդների նկատմամբ: 1990-99 թթ. հայ ժողովուրդն ավելի կենսունակ էր, քան իր հարևան ադրբեջանցիները, ուստի ավետարանական ճշմարտության պես՝ «վատ ու չար ծառայից» վերցվեց նրա չունեցածն էլ և տրվեց առավել կենսունակին: Կապացուցե՞նք մեր կենսունակությունը՝ կմարսենք կենսունակների այդ սերնդի վերցրածն էլ և կավելացնենք նորերը, չե՞նք լինի կենսունակ՝ կկորցնենք այն, ինչ կարծել ենք, թե ունենք: Սա՛ է պատմության և քաղաքակրթության տրամաբանությունը, օրինաչափությունը:

Այսինքն՝ «ծովից-ծովի» մասին ճամարտակում են նրանք, ովքեր ռեալ մտածելու ունակ չեն: Անհրաժեշտ է մտածել կենսունակության մասին, որի պարագայում «ծովից-ծովը» և այլ իռացիոնալությունները լուծվում են ինքնաբերաբար. 2000 տարի առաջ է Քրիստոսը հուշել՝ ասելով ճրագները մշտապես վառ պահելու մասին:

Իսկ Հայ դատը նույն «ծովից-ծովի» հորինողներն են հեղինակել՝ որպես արդյունք քաղաքական մտքի տհասության: Այն ժողովուրդները, ովքեր իրենց հարցերը փորձում են դարձնել միջազգային դատ՝ դրանով իսկ խոստովանում են իրենց ոչ կենսունակ, թույլ, մարդկային մեծ ընտանիքին անպիտան լինելը: Առավել ևս պետության պայմաններում Հայ դատ ասվածը թունավորում է մտքերն ու հոգիները՝ պետության գերակայությունից, պետական շինարարությունից ուշադրությունը շեղելով ու եղած ներուժն անիմաստ փոշիացնելով: Գերմանիան ու գերմանացիները բաժանված լինելով ԳԴՀ-ի և ԳՖՀ-ի, Իռլանդիան ու իռլանդացիներն այսօր էլ բաժանված լինելով Միացյալ Թագավորության և Իռլանդիայի, Հնդկաստանն ու հնդիկներն այսօր էլ բաժանված լինելով Հնդկաստանի և Պակիստանի... և այսպես շարունակ, երբեք չփորձեցին միջազգային դատի վերածել իրենց հարցերը, քանի որ գիտակցել են, թե հարցերը բացառապես լուծվում են կենսունակ պետություն և առողջ հասարակություն ունենալու ճանապարհով: Քանի դեռ հայության մեջ որոշակի շեմը հատած տոկոս կկազմեն Հայ դատի հիվանդությամբ տառապողներն ու դրանով կվարակեն նաև պետությունը, հայության վերջին ու միակ հույսի՝ հայ պետականության գլխին կախված կմնա կործանման ամենաիրական վտանգը: Ժամանակին Եղիշե Չարենցը, չնայած բանաստեղծական ձևում, սակայն հենց այդ նույն իրողության մասին է հստակ գիտակցել տվել, որ «մեռելներին, որքան էլ հարազատ, թաղել է պետք». ավելացնենք՝ առավել ևս՝ մեռելածիններին:

10. - Ո՞րն է կարգախոսը. հանուն ինչի՞ է սրբազան պատերազմը:

10. - Կարգախոսները կենսունակ են միայն ժամանակի մեջ, ինչպես, ասենք, 5-րդ դարի վիճարկելի «Մահ կամ ազատությունը» վտանգավոր անախրոնիզմ է 20-րդ, առավել ևս՝ 21-րդ դարում: Այսօր պետք է աշխատել իրավական, ամուր, բայց ոչ ամբողջատիրական պետության, անշրջելի ժողովրդավարության, քաղաքացու իրավունքների, քաղաքացիական հասարակության, պետական բարոյականության, սեփական դեմքը չկորցնելու՝ բայցև համաշխարհային ինտեգրացիայի, հազար տարվա մենությունից դուրս գալու, նորագույն տեխնոլոգիաների, թեթև, սննդի և քիմիական արդյունաբերության և ամենակարևորը՝ ոգեղենության մթնոլորտիհամար:Համաշխարհայինզարգացումներին զուգընթաց՝ սրանք ևս կփոփոխվեն՝ բացառված չէ՝ մինչև տրամագծորեն հակառակ որակի: Ցանկացած նորմալ ժողովրդի համար հավերժական կարգախոս կարող է լինել միայն ազատության գիտակցումը՝ Ազատությունը:

Պատերազմը չարիք է և երբեք չի կարող լինել սրբազան: Դեռ հին հույներն էին նկատել դա, երբ «սրբազան պատերազմում» զոհված Աքիլլեսն այն աշխարհից Ոդիսևսին ասում է. «Ավելի լավ է լինել վերջին ծառան Երկրում, քան արքա՝ մեռյալների թագավորությունում»: Պատերազմը մտքի և հոգու ճակատներում կրած պարտության խոստովանությունն է, քանի որ միշտ էլ կարելի է հաղթել մինչ այդ և գործը չհասցնել արյան ու ավերի: Պատերազմից խուսափելու համար պետք է ջախջախիչ հաղթանակներ տանել մտքի և հոգու ճակատներում, բայց հաշվի առնելով մարդկային պատմության փորձը՝ մշտապես պատրաստ լինել նաև պաշտպանական իրական պատերազմին: Պատերազմն արդարացված է, եթե այն հանուն Կյանքի է, իսկ Կյանքը տիեզերքի թրթիռներին ներդաշնակ ապրելն է: Այդ դեպքում է միայն, որ պատերազմը պատերազմ չէ, այլ բնության օրինաչափություն՝ գոյապայքար՝ հանուն Արևի տակ սեփական տեղի: Գոյապայքարի նպատակը ոչ թե մահն է, այլ Հաղթանակը՝ Կյանքը: Անիմաստ է այն մահը, որը նոր Կյանքի սկիզբ չէ, ինչպես Հիսուսի Խաչելությունը՝ Հարության: Կյանքը նույն ինքը Բարոյականությունն է, իսկ բարոյականությունը բնության կողմից տրված ապրելու իրավունքի դիմաց ունեցած պարտքի գիտակցումն ու դրա կատարումից չհրաժարվելն է: Ամեն անհատ, եթե մակաբույծ չէ, ապա պարտք ունի իր մեծ և փոքր ես-երի՝ պետության և ընտանիքի առջև, որի անվերապահ կատարումը Կյանքի գրավականն է: Բարոյական մարդ կարող է կոչվել միայն Քաղաքացին, քանի որ միայն նա՛ ունի իրեն իրավունք և պարտք տվող՝ Պետություն: Կեղծ, հորինովի արժեքների վրա են հիմնված «սրբազան պատերազմները». սրբազանը գոյապայքարն է՝ մանկան արցունքը ժպիտի վերածելու, մահը Կյանքով փոխարինելու համար:

11. - Այդ դեպքում, կա՞ պատմական առաքելություն:

11. - Ինչպես մարդու ամեն մի օրգան բնության կողմից նախատեսված է ամբողջական մարմնի ներդաշն գոյությունն ապահովելու համար (աչքերով տեսնում և ոչ լսում են, ոտքերով շարժվում և ոչ մտածում են), այնպես էլ ազգերը մարդկության միասնական օրգանիզմում կատարում են իրենց նախասահմանված առաքելությունները: Տգիտության արդյունքում կարող է առաքելությունը ճիշտ չընկալվել, և կիետևեն արժեքային քաոսը, ընդհանուր զարգացման խանգարումը (եթե ձեռքերը խառնվեն ոտքերին վերապահված գործունեությանը, ապա մարդը ետընթացով չորքոտանի կդառնա, սխալ հիգիենայի արդյունքում հիվանդացած ատամը կարող է խանգարել և՛ մյուս ատամների, և՛ այլ օրգանների առողջ գործունեությանը), որի արդյունքում դարձյալ կիետևի Քրիստոսի ավետարանական ճշմարտությունը. «Եթե խանգարում է քո աչքը կամ ձեռքը, ապա կտրիր և դեն նետիր, որովհետև ավելի լավ է կորցնես մարմնիդ մի անդամը, քան ամբողջ մարմինդ»: Այդպես են և ավելորդ ու բորբոքված կույրաղիքի, հիվանդ այլ օրգանների դեր ստանձնած ազգերը, որոնք հեռացվում են սանիտարի դեր կատարող մի մասի կողմից՝ մյուսների լռելյայն կամ ցավին չհամակերպվող ճչոցներով:

Չկան առաքելություն չունեցող ազգեր. կան իրենց առաքելությունը չգիտակցող ու վատ կատարող ազգեր, որոնք ժամանակի ընթացքում դառնում են մարդկության զարգացման խոչընդոտներ ու իրենք իրենց դատապարտում ոչնչացման, իսկ «Սուրբ տեղը երբեք դատարկ չի մնում»:

12. - Ո՞րն է հայ ազգի առաքելությունը:

12. - Վերջին երկու հազար տարում հայերի գրեթե բոլոր սերունդները դժբախտաբար ապրում են միայն ետ նայելով ու երազելով, իրենց փառքն անցյալի մեջ փնտրելով: Եվ այդ անցյալում, որպես դրական, գտնում են միայն գիտական ու հոգևոր արժեքներ: Այդտե՛ղ պետք է փնտրել հայի առաքելությունը, որը երբեք չի կարող մեկուսի և ինքնանպատակ լինել, այլ պետք է ծառայի իր և իրենով՝ համայն մարդկության առաջընթացի գործին:

Ինչպես որ անհնար է, երբ մարմնի մի անդամի հիվանդության պատճառով չտնքա, չջերմի ամբողջ մարմինը, չխանգարվի ամբողջ մարմնի նորմալ կենսավիճակը, այնպես էլ անհանդուրժելի է մարմնի մի առանձին անդամի չաճելը կամ գերաճը, երբ որոշակի տրամաբանությամբ է աճում ամբողջ մարմինը. անդամների միջև կապն օրգանական է: Այսօր հպարտությամբ ցուցադրվող Գառնին հելլենիստական շրջանի հայկականացված արդյունք է: Իսկ որքա՜ն շրջաններ են Հայաստանն ու հայությունը բաց թողել խեղված ինքնամփոփության դարերում: Բաց համակարգը ձուլում, վերացում է նշանակում ոչ կենսունակների համար, իսկ կենսունակ հանրույթները, բացվելով աշխարհի հետ, նրա ամենայն լավն ընդունում են սեփական պրիզմայով, ազգայնացնելով, իսկ վատը, գենետիկ կոդին խորթը վանվում են ինքնաբերաբար՝ ապահովվելով թունավորումից և այլասերումից:

13. - Ե՞րբ են վերանում ազգերը:

13.-Ազգերըվերանումենայնժամանակ,երբիրենց հակադրում են ամբողջ մարդկությանը՝ փոխանակ ընկալելու տարբերությունների վրա հիմնված ամբողջականության ներդաշնակությունը: Այն ժամանակ, երբ մրցակցին՝ թշնամի, գործընկերոջը՝ բարեկամ, պահը՝ հավիտենականություն են ընկալում: Այն ժամանակ, երբ կա՛մ չեն գիտակցում, կա՛մ հրաժարվում են կատարել իրենց առաքելությունը՝ վտանգելով համայն մարդկության զարգացման տրամաբանությունն ու օրինաչափությունը: Այն ժամանակ, երբ դառնում են ծայրահեղական-հեղափոխական կամ քարացած-դոգմատիկներ: Այն ժամանակ, երբ կորցնում են օրինաչափությունների զգացողությունը և օբյեկտիվ իրողություններին հարմարվելու փոխարեն կա՛մ կորցնում են իմունոհամակարգը, կա՛մ տեսակային մուտացիայի ենթարկվում. այդպես մոլորակի բնակլիմայական փոփոխության արդյունքում դանդաղաշարժ, չհարմարվող, բացառապես խոտակեր՝ թեկուզև խոշոր կենդանիները տեղը զիջեցին ճարպիկ, հարմարվող, մսակերությունը հիմնականում չբացառած ժամանակակից կենդանական աշխարհին: Այդպես է և ազգերի պարագայում - ստորակարգերը, թույլերը, անընդունակները, հեղափոխականները, դոգմատիկները մշտապես փոխարինվում են բարձրակարգ, կենսունակ, ուժեղ, հարմարվող ու ճկուն ազգերով: Ազգերը վերանում են նաև այն ժամանակ, երբ տեղի է ունենում ներազգային խեղում, հակաբնականություն, երբ սեռական այլասերումը փոխարինում է ընտանիքին, երբ հոգու արտահայտիչ սեփական լեզուն փոխարինվում է օտարինով, երբ իշխող է դառնում Խորենացու զգուշացրած «ժառանգությունից փախչելը», երբ քաղաքացու փոխարեն հպատակն է կամ հավերժական գաղթականը, որը չի գիտակցում իր արժանապատվությունն ու իրավունք-պարտականությունները, երբ ժողովրդից ամբոխի է վերածվում՝ վերջինիս ներհատուկ ատրիբուտներով:

➲18

17➲

14. - Ո՞րն է ընտանիքի դերը:

14. - Ընտանիքը պետության մանրակերտն է. դրանք գործում են նույն օրենքներով, սակայն ունեն միմյանց լրացնող տարբեր գործառույթներ: Երբ պետության և ընտանիքի գործառույթների կրկնելիություն է լինում՝ իրար լրացնելու փոխարեն, դատապարտվում են երկուսն էլ: Ընտանիք համակարգն առաջին հերթին ստեղծված է հակաբնականությունը թույլ չտալու, ժառանգականությունը (ոչ միայն սերնդատվությունը) ապահովելու համար: Ընտանիքը սրանից դուրս կարևոր գործառույթներ է վերցնում, երբ բացակայում է պետությունը, իսկ պետության առկայության դեպքում՝ սրանից ավելին վերցնելը կործանման է դատապարտում պետությանը: Պետություն չունեցող ժողովուրդների (եզդիներ, բասկեր և այլն) ընտանիքները նահապետականության տեսակետից ավելի «ամուր» են, քան պետության ավանդներ ունեցող ժողովուրդներինը (ժամանակակից եվրոպական և այլ ազգեր): Պետություն ունեցող ժողովուրդների ընտանիքները միմյանցից տարբերվում են ընդամենն ըստ իրենց էթնիկ առանձնահատկությունների: Պետականությունը նոր վերագտած հայ ժողովուրդն ընտրություն է կատարելու պետականության ու ներսից նեխող քարացած-նահապետականության միջև: Պետականությունն ընտրելու պարագայում ավելի բարձրակարգ ընտանիքի տիպ է որդեգրելու, որի առաջնային խնդիրներն են առողջ ժառանգականության (ոչ միայն սերնդատվության) ապահովումը և սեռային հակաբնականություն թույլ չտալը:

15. - Հայ եկեղեցին ե՞ւս պետք է փոփոխվի, որը վերջին հազար տարում ուներ նաեւ պետության գործառույթներ:

15. - Անշուշտ: Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, որ պետականազրկության վերջին հազար տարում հաճախ հաջողությամբ իրականացրել է նաև պետության որոշ գործառույթներ, պետության առկայության պարագայում պիտի սահմանափակվի հոգևոր ու բարոյական ոլորտներով: Մակերեսի անհրաժեշտ սահմանափակումը պետք է լրացվի խորացումներով:

16. - Հայաստանում օրավուր շատանում են աղանդները, դա կործանման չի՞ տանում:

16. - Կործանման տանում են քաոսը, ապաբարոյականությունն ու անկարողությունը: Կրոնական համայնքները շատանում են երկու հիմնական պատճառով. առաջին՝ Հայ եկեղեցու՝ ժամանակակից մարդու հոգևոր պահանջմունքները ժամանակակից լեզվով ու ձևերով բավարարել դժվարանալուց, երկրորդ՝ օտարերկրյա հատուկ ծառայությունների աշխատանքին՝ պետության՝ դիմադրել չկարողանալու արդյունքում, որոնք այստեղ խմբեր ունենալով՝ կարևոր շատ գործընթացներ իրենց համար վերահսկելի են դարձնում: Ժամանակին ճգնաժամ ապրող հայ աստվածներին փոխարինեց այն ժամանակվա աղանդներից մեկը՝ «օտարամուտ» քրիստոնեությունը, որը դարերի ընթացքում ազգային եկեղեցի ձևավորեց: Ինչպես անհատների, ինչպես ժողովուրդների ու ազգերի, այնպես էլ եկեղեցիների պարագայում հաղթում է առավել կենսունակը, ճկունը, ուժեղը: Քրիստոնեությունը բացարձակապես մեղք չունի քրիստոնեական ընկալման հայ-ժողովրդական կերպի համար. քրիստոնյա շատ ժողովուրդներ կերտեցին աշխարհակալ կայսրություններ, մղեցին նվաճողական դաժան պատերազմներ, այսօր էլ հաջողությամբ շարունակում են իրենց հաղթարշավը գիտության, մշակույթի գրեթե բոլոր ճյուղերում, մինչդեռ ծույլերը, սեփական մեղքն ուրիշների վրա բարդողներն իրենց հարմար մեկնաբանմամբ հղում են կատարում միայն «Մի այտդ ապտակում են՝ մյուսն էլ տուր» խորիմաստ ասույթին: Հայ եկեղեցին թաքնված հզոր հոգևոր ներուժ ունի՝ այս գոյամարտում հաղթանակելու համար, բայց նա էլ հայտնվել է դարն ապրած դոգմատիկ-նահապետականության և ստեղծագործ միտք պահանջող ժամանակի հրամայականի միջև: Միանգամայն անարդար է, նաև կործանարար, մեր մեղքն ուրիշների վրա գցելը. պատճառները փնտրենք մեր մեջ: Շնորհակալ պետք է լինել ճակատագրին, որ մեզ թուրքի պես անհանգիստ հարևան է բաժին հանել. եթե ապրելու ներուժ ունենք, ապա մշտապես կլինենք ավելի՛ զգոն, ավելի՛ մարզված վիճակում. շնորհակալ պետք է լինել ճակատագրին, որ Հայաստանում այսօր այսքան կրոնական համայնքներ կան, քանի որ լրացուցիչ հնարավորություն է ստեղծված Հայ եկեղեցու և պետության համար, որ վերջիններս բացահայտեն իրենց ապաշնորհությունը կամ կենսունակությունը:

17. - Ի՞նչ է ազգային գաղափարախոսությունը:

17. - Չարչրկված այդ արտահայտությունը պետք է ենթադրել, որ նույն ինքը կյանքի բնական օրենքների ամբողջությունն է, որին երկրորդ՝ ազգային գաղափարախոսություն անվանում տալու մարմաջն անիմաստ է: Ազգային գաղափարախոսություն որակումն ընկալելի և ընդունելի է, եթե այն ընկալվում է որպես մի ազգի զարգացման համալիր ծրագրի և այդ ծրագրի իրականացման՝ տվյալ ազգի գենետիկ կոդին և ազատ ինքնադրսևորման յուրահատուկ կերպին համապատասխան ճանապարհների ամբողջություն: Բայց քանի որ Կյանքն անընդմեջ զարգացման մեջ է, ուստի անպատկերացնելի է մեկընդմիշտ շարադրված ու խմբագրում-սրբագրում չենթադրող ազգային գաղափարախոսություն ասվածը: Պատմական նորմալ ճակատագիր ունեցած ազգերի համար դա նույն պետության գաղափարախոսությունն է. այսօրվա հայերի համար դրանց համընկնումը դժվար ընկալելի է, մինչդեռ դրանք մեկը մյուսից անճանցելի են: Պետությունն ավելին է, քան ազգը. պետական ազգն ավելին է, քան պետությունը:

18. - Ի՞նչ է պետությունը:

18. - Պետությունը տվյալ ազգի կարգաբանական աստիճանը որոշող քննությունն է, մշակույթի բարձրակետը: Լինելով համաշխարհային քաղաքակրթական ստեղծագործության բարձրագույն արժեքներից՝ պետությունը, ինչպես նաև պետականության որակը բնորոշում են տվյալ ազգի բարձրակարգությունը կամ ստորակարգությունը: Պետությունն ազգային պաշտպանական բարձրագույն համակարգն է և առայժմ միակ միջոցը, միակ հնարավորությունը՝ որևէ ազգի մինչև վերջ և բնական ինքնադրսևորման: Միևնույն ժամանակ պետությունն ինքը նաև ազգակերտիչ երևույթ է: Չգոյության կամ ցածրակարգության են դատապարտված այն ազգերը, որոնք չեն կարողացել պետություն կերտելու աստիճանի հասնել կամ, դեգրադացվելով, կորցրել են պետականությունը: Եթե կատակլիզմային վիճակներում պետական ազգը (քաղաքացիական մենթալությամբ ազգը) ժամանակավորապես կորցնում է պետականությունը, ապա այն կվերականգնվի անպատճառ, ինչպես եվրոպական բազում նշանավոր ազգեր Երկրորդ աշխարհամարտում կորցրին պետականությունը, բայցև կարճ ժամանակում, լինելով պետական-քաղաքացիական ազգեր, վերականգնեցին իրենց պետականությունը՝ ի տարբերություն քրդերի, գնչուների, ասորիների, հնդկացիների, տիբեթցիների և այլն:

Ազգը ստեղծում է իր ինքնադրսևորման առայժմ քաղաքակրթությանը հայտնի միակ բարձրագույն ձևը՝ պետությունը, իսկ պետությունը ստեղծում է պետական ազգին՝ որպես մարդկության որոշակի հանրույթի ամենաազնիվ տեսակի: Ինքնանպատակ է այն պետությունը, որը նաև հայրենիք չէ. անիմաստ է այն հայրենիքը, որը նաև պետություն չէ: Ներդաշնությունը սրանց համակշռելիության մեջ է, իսկ հակադրումը գավառամտություն է ու կործանարար կղերականություն:

Պետությունը քաղաքացիների միջև կնքված այն պայմանավորվածությունն է, որը երաշխավորն է կոլեկտիվ պաշտպանունակության, անվտանգության, օրենքների առջև բոլոր քաղաքացիների բացարձակ հավասարության, սեփականության անձեռնմխելիության, այս ոգով սերունդների դաստիարակման իրավունքների: Քաղաքացին պետության, պետությունը՝ քաղաքացու համար: Ամուր է այն պետությունը, որը հպատակների փոխարեն ունի պետությունը որպես հայրենիք ընկալող քաղաքացիներ:

19. - Ի՞նչ է Սփյուռքը:

19. - Ժամանակի կտրվածքում Սփյուռքը Հայաստանի պետության հոծ ներկայացուցչությունն է տարբեր երկրներում, Հայաստանի պետության շահերի արտահայտիչը: Ավելի հետոյի համար Սփյուռքն օրինաչափորեն ձուլման դատապարտված, բայց այն ներուժն է, որը երբևէ կա՛մ կարող է վերադառնալ իր և իր նախնիների հայրենիքը, կա՛մ Հայաստանի պետության խելամիտ քաղաքականության արդյունքում կենտրոնանալ մոլորակի այս ու այն անկյունում՝ ստեղծելով Հայաստանի պետության շահերը գերակայություն դարձրած նոր պետական միավորներ, ինչպես ժամանակին Հայաստանը փոքր կած Կիլիկիան: Որքան արագացվեն Սփյուռքի հարցերի արդյունավետ լուծումները, այնքան քիչ կլինի գենոֆոնդի այդ հատվածի փոշիացումը:

20. - Ի՞նչ իրավունքներ ունի սփյուռքահայը Հայաստանի պետությունում:

20. - Սփյուռքահայը Հայաստանում ունի բոլոր իրավունքները՝ բացառությամբ Պետության առաջին դեմք ու Խորհրդարանի անդամ ընտրելու և ընտրվելու. վերջապես պետք է հաղթանակի քաղաքացու ինստիտուտը, վերջապես պետք է ձևավորվի պետական-քաղաքացիական ազգը: Ունի քաղաքացու բոլոր պարտավորություններից օգտվելու իրավունքը՝ սեփական ընտրությամբ, մինչդեռ Հայաստանի պետության քաղաքացին իրավացիորեն չունի անհատական հնարավորություն՝ սեփական ընտրությամբ ու քմահաճույքով որոշելու իր իրավունքների և պարտականությունների սահմանները. դրանք նա խմբովին որոշել է պետության գոյության բուն փաստով, իր քաղաքացիությամբ: Այսինքն՝ պարտադիր միակ տարբերակվածությունը ընտրելու և ընտրվելու հարցում է:

21. - Ո՞վ պետք է առաջնորդի այս գործերում:

21. - Առաջնորդողը պետք է լինի օրինական իշխանությունը: Առաջնորդներ՝ Հիտլերի, Մուսոլինիի, Ստալինի կամ այլ անձի տեսքով, որ դիտարկվեն որպես «փրկիչ», «անճառելի», «միակ», վտանգավոր են և կործանարար: Անհրաժեշտ է քաղաքացիների մեծամասնության կողմից ընտրված ղեկավար, համակարգող, որը կկառավարի ու կհամակարգի միայն Սահմանադրությամբ վերապահված ժամանակահատվածում և լիազորություններով: Կառավարելու իրավունք ունի բացառապես քաղաքացին: Ղեկավարելու և կառավարելու ունակ քաղաքացիները տվյալ ժողովրդի էլիտան են: Ապագա ունեն այն ազգերն ու պետությունները, ուր բյումպենը, միջինը և էլիտան գտնվում են իրենց տեղերում: Ապագա ունեն այն ազգերն ու պետությունները, ուր գործում է հասարակության բրգաձև կառույցը, ուր ոչ թե կլանային, թայֆայական, այլ գաղափարախոսական հենքի վրա կայացած են հասարակական ու քաղաքական ինստիտուտները, ուր կուսակցությունները կատարում են ոչ թե ժողովրդի ներսում դրված բաժանարար գործոնի, այլ ճամփաներ առաջարկողի, իրականացնողի, ժառանգականությունը հայրասպանության վերածելուց փրկող կառավարման դպրոցի դեր:

Ոչ թե 95-ամյակ, այլ 95-րդ տարելից

Հայերենը հայի ինքնության կնիքն է

Սովորաբար, որևէ երկրում իրավիճակի կամ հասարակարգի փոփոխությունն իր նվազագույն ազդեցությունն է թողնում հասարակության վրա՝ լինի դա ձեռքբերում, թե կորուստ: Նման իրավիճակների համար ժամանակն արել է իր սահմանումը և տվել իրավիճակի մոտավոր նկարագիրը, ինչը նկատելի է դառնում հասարակության բոլոր շերտերում:

Սահմանված կարծրատիպերից, անշուշտ, խուսափել հնարավոր չէ, միևնույն ժամանակ, դրանց առկայության պարագայում հետընթացն արդարացում չէ, քանի որ ցանկացած փոփոխության շրջանում գիտակցված մոտեցումը հնարավորություն է տալիս նվազագույն կորուստներով դուրս գալ իրավիճակից:

Վերջինը գերադասելի քայլ է, բայց ոչ կիրառելի: Հասարակությունը փոփոխության՝ անցումային շրջանում շատ հաճախ ընթանում է ոչ թե բանականության թելադրանքով, այլ պահի հրամայականով: Այսօր հայ հասարակությունը տեղի է տվել ժամանակի հրամայականին. ականջալուր է նրա պահանջներին և գրկաբաց՝ ողջ աշխարհի մարտահրավերների առաջ:

Միևնույն ժամանակ, ինքնաբերաբար խուսափում է սեփական արժեքների արժեվորումից, որով կծառայի հայ ազգային արժեհամակարգի անխաթարությանը: Դեռ ավելին, հայն ինքնագոհ կարևորում է աշխարհի շահը և իրեն լավ է զգում օտարի հետ համաքայլ ընթանալիս, առիթը բաց չի թողնում՝ համեմատվելու և ինքն իրեն ուրիշներից գերադասելու:

Սովետական հասարակարգի փլուզումից խարխլվեց հայկական դպրոցի հիմքը, անխուսափելի եղավ երաշտը Հայոց լեզվի համար: Ասել, թե հակաքայլ չի արվում՝ ճիշտ չէ. հայ հասարկության մեջ առկա է մտավորականների ոչ այնքան ստվար մի զանգված, որն անդուլ պայքար է մղում մայրենին նվազագույն չափով անաղարտ պահելու համար: Մասնագետները տագնապում են ամենաթողությունից. անհանգստությունը, թերևս, տեղին է:

Պայքարը կա, սակայն՝ ընդհատակյա է, որովհետև պայքարը տարվում է միայն գիտական հաստատությունների պատերի ներսում. այն դեպքում, երբ այն պետք է սկսել մանկապարտեզից ու դպրոցից, հետևողականորեն շարունակել բուհերում՝ գիտական բոլոր հաստատություններում: Այո՛, պայքարն ընդհատակյա է, քանի որ հասարակության հետ շփվելու, երկխոսելու դաշտը դեռևս փակ է, ավելի ճիշտ՝ անհասանելի. հայաստանյան լրատվամիջոցներն ու տպագիր մամուլը (բացառությամբ մեկ-երկուսի), իրենց բնորոշմամբ՝ «հույժ կարևոր առաքելությամբ» են զբաղված:

Վերջինների «հույժ առաքելությունը» արդեն իսկ խարխլված հայերենի աղճատումն է: Ակնկալիքս այն չէ, որ մեր տեղեկատվական ողջ համակարգը լեզվաբանբանասերի դեր ստանձնի, մի՞թե անկարելի է նվազագույն չափով ուշադրություն դարձնել եթերից հնչող ու հազարավոր տպաքանակներով տպագրվող մամուլի օտարաշունչ հայերենին:

Այն, որ մեզանում արբեցնող գլխապտույտ է առաջացնում օտարամոլությունը, դա անառարկելի է... իսկ արդյունքում հայերենի կորուստն ահռելի չափերի է հասնում, և հասարակության բոլոր շերտերի համար այն դառնում է խոնցելի: Օտարամոլությունն էլ մի կողմ թողնենք, ինչպե՞ս կարելի է բացատրել այս աստիճան անտարբերությունը, որ հայ հասարակությունը ցուցաբերում է մայրենիի հանդեպ: Անգամ, պետական՝ կառավարական, ամենաբարձր պաշտոններ զբաղեցնող քաղաքական գործիչների հայերենն է բոկոտն: Արդյոք արդարացո՞ւմ է լինել բարձրաստիճան պաշտոնյա և չիմանալ հայերեն, առավել ևս, չխոսել ճիշտ հայերեն: Անշուշտ, ոչ: Հարց է ծագում՝ մի՞թե կառավարական կառույցում՝ բարձրաստիճան ղեկավարի կողքին, չկա հայերենի մասնագետ, ով, քաղաքավարի, հանրության աչքից աննկատ, կուղղի նրա սխալը՝ կանխելով կրկնությունը:

Մեկ օրինակ բերեմ, այս օրերին տեղական և միջազգային լրատվամիջոցների հրապարակումների գլխագրերը սկսվում են Հայոց ցեղասպանության մասին անդրադարձերով, որը վերջին մի քանի շաբաթներին դարձել է միջազգային և տեղական քաղաքական կառույցների ակտիվ ու թեժ քննարկման թեմա: Այս ալիքը իր շարունակությունը դեռ կունենա: Ինչո՞ւմն է այստեղ խնդիրը. այս օրերին հայկական հեռուստաեթերից բազմաթիվ անգամ հնչում է՝ «Հայոց ցեղասպանության 95-ամյակ», «Հայոց ցեղասպանության 95-րդ տարելից»:

Այս տարբերակներից ո՞րն է ճիշտ. ամյա՞կ, թե՞ տարելից: Այս հարցադրումը թող չհիշեցնի հայոց լեզվի քննական հարց: Չնայած, որ ունեի իմ հարցադրման պատասխանը, որը և ճիշտ էր, սակայն, շփոթմունքս վերածվեց կասկածանքի, որովհետև օրեցօր հաճախացավ «Հայոց ցեղասպանության 95-ամյակ» տարբերակի կիրառումը բարձրաստիճան իշխանավորների, քաղաքական մեկնաբանների ու լրագրողների կողմից: Ի վերջո, ամյա՞կ, թե՞ տարելից:

Կասկածանքս փարատելու համար, դիմեցի հայոց լեզվի առաջատար մի քանի մասնագետների՝ նրանց պատասխանները և հիմնավորումները ստանալու համար:

Իմաստով նույնն են այս երկու բառերը, սակայն, առկա է ոճական նրբություն, ընդգծված տարբերություն, որի ընկալում հասու չէ շատերին:

«Ամյակ» – արմատը՝ «ամ», նշանակում է տարի: «Ամյակ» բառը, սովորաբար, կիրառվում է ծննդյան, ամուսնության, ընկերության տարեդարձերի, հոբելյանների, իսկ հասարակության լայն շրջանում՝ պետության հիմնադրման, անկախության, հաղթանակի և այլ դեպքերում: Մի խոսքով, երբ իրադարձությունը տոնական մթնոլորտ և տրամադրություն է հաղորդում հասարակությանը:

«Տարելից» – արմատը՝ «տարի»: «Տարելից» բառը կիրառվում է մարդու մահվան տարին լրանալու, կամ կործանարար, տարերային աղետների, ավերածությունների, պատերազմների, զանգվածային կոտորածների՝ ցեղասպանությունների ժամանակ զոհվածների հիշատակի և դեպքի բոլորող տարին կամ տարիները նշելու դեպքում, որոնք հասարակության շրջանում թախիծ ու վիշտ են առաջացնում և պարունակում են ոգեկոչման՝ սգո ծիսակատարություն:

1915-1923 թվականներին Արևմտյան Հայաստանում գազանաբար կոտորեցին հայ մտավորականության ողնաշարը, արմատախիլ արեցին հազարամյա ռանչպարին: Աշխարհասփյուռ հայության համար Հայոց ցեղասպանությունը շարունակում է կորստի ցավ ու մեծ կսկիծ առաջացնել ավելի քան ինը տասնամյակի հեռավորությունից:

Ուրեմն, պետք է ասել Հայոց ցեղասպանության 95-րդ տարելից, կամ Հայոց ցեղասպանության 95-րդ տարի: Հայոց ցեղասպանությանն անդրադառնալիս «ամյակ» բառի կիրառումը սխալ է:

Կան ազգային արժեքներ, որ չի կարելի վերածել ինքնահոսի, համոզումով, որ «մեկ է, ժամանակն իր գործն անելու է»: Քանի որ հազվադեպ է պատահում, երբ ստացված արդյունքը համապատասխանում է պետության ու ժողովրդի ազգային շահերին: Հայերենը մեր ազգային արժեքներից մեկն է, կնիքը՝ հայի ինքնության: Հայերենը մեր ժողովրդի ազգային խորհրդանիշն է՝ հազարամյա պահապանը, որն արժանի է միայն հարգանքի:

Ջեմմա ԲԱՂԴԱԴՅԱՆ

«Ուխտ Արարատի» պարբերականի փոխխմբագիր

hetq.am, 24.04.2010


ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒՆ

Մեսրոպ Մաշտոցն ասաց՝ որդիս,
Էլ ինչո՞վ ես հույսը բերդիս,-
Էլ հայրենիք ինչո՞ւ եկար,
Թե պիտ խոսես օտար լեզվով,
Խմես հայոց գինին նեկտար,
Կենաց կանչես օտար լեզվով,
Քաղես հայոց վարդերն ու հեզ
Աղջիկ կանչես օտար լեզվով:
Իրավ քանի լեզու գիտես՝
Այնքան մարդ ես՝ իրավն ասին,
Բայց, որ քո հայ լեզուն չունես,
Էլ ի՞նչ հույս ես քո Մասիսին,
Որ թողել ես քո մայրենին՝
Հարամ է քեզ հայոց գինին,
Հարամ է քեզ աղջիկն հայոց,
Հայոց սիրտը, Մասիսն հայոց:
Մայր հայրենիքն էլ ի՞նչ սրտով
Քո ոտքերն էլ գրկե վարդով...
... Ա՛խ, չէ, Մասիսն հալալ է քեզ,
Հայոց վշտում դու մեղք չունես,
Հալալ է քեզ հողն հայրենի,
Թող քեզ ջուրն էլ դառնա գինի:
Քանզի հայոց վայ սփյուռքում
Պանդխտությունն է դեռ պոկում
Հայի բերանից հայոց լեզուն,
Օտարն հայոց մահն է ուզում...
Բայց նա է հայ, ով հովազի
Արնախում երախումն էլ
Իր մայրենի լեզվով խոսի,
Մոր կաթի հետ ծծած լեզվով,
Որ հայ գետը ծով ծնի, ծով,-
Ժխորում էլ Բաբելոնի
Խոսի լեզվով իր մայրենի
Հայոց լեզվով, որ միշտ ջահել,
Մեզ բյուր դարեր հայ է պահել:

Հովհաննես ՇԻՐԱԶ

ՀԱՅՈՑ ԱՐՔԱՆԵՐ

Միջագետքի թագավորությունները



Քրիստոսից առաջ 20-ից 17-րդ դարերում աշխարհաքաղաքական իրադարձությունների հիմնական թատերաբեմը Առաջավոր Ասիան էր՝ Միջագետքը, Իրանական բարձրավանդակը, Հայկական լեռնաշխարհը:

Միջագետքի հյուսիսը Հին Ասորեստանի մայրաքաղաք Աշուրի ազդեցության տակ էր, որի արքա Շամշի-Ադադ Ա-ն, գրավելով հսկայական տարածքներ, հասել էր մինչեւ Հայկական լեռնաշխարհի հարավային սահմանը կազմող Կուտիում ու Սուբուր-Արման երկրները: Առաջ գնալ այս արքան չէր համարձակվում, քանզի պատերազմել հայոց արքաների հետ՝ կնշանակեր պարտություն: Նույն իրավիճակն էր նաեւ Հին Բաբելոնի ամենահայտնի արքա Համմուրապիի (Ք.ա. 1792-1750 թ.թ.) օրոք: Նա, ի տարբերություն նախորդների, իր գահակալության վերջին տասնամյակում հայոց երկրի վրա, այնուամենայնիվ, պարբերաբար արշավում է, բայց հաջողության այդպես էլ չի հասնում: Ավելին, նրա որդի Սամսուիլունայի (Ք.ա. 1749-1712 թ.թ.) իշխանության ութերորդ տարում տեղի է ունենում հայերի արշավանքը դեպի Բաբելոն: Հայ ասելով, տվյալ դեպքում, ի նկատի ունենք պատմությանը հայտնի քասեցիներին: Քասու (Քաշու) երկիրը Հայկական լեռնաշխարհի հարավ-արեւմուտքում գտնվող Քաշիար լեռներում էր, որոնք հին հունական ու հայկական աղբյուրներում նշվում են Մասիուս եւ Մասիոն անուններով: Ավելի պարզ՝ քասեցին ոչ թե ազգի, այլ բնակավայրակերտ անվանում է, ինչպես հիմա՝ երեւանցի, ղարաբաղցի, լոռեցի եւ այլն:

Շարունակենք: Հայոց զորքը Ք.ա. 1742 թ. առաջնորդում էր քասեցի արքա Գանդաշը, ում հրամանատարությամբ էլ նրանք գրավում են Բաբելոնը, տիրանում նաեւ Հին Միջագետքի պաշտամունքային կենտրոն Նիպպուր քաղաքին, խլում «արքա աշխարհի չորս կողմերի, արքա Շումերի եւ Աքադի, արքա Բաբելոնի» տիտղոսը: Ավելի ուշ գրավելով ողջ Բաբելոնիան՝ քասեցիները փոխում են նաեւ երկրի անունը եւ կոչում Քարդունիաշ կամ Քարդու, որը, որպես հարավային Հայաստանի հնագույն անվանում, հիշատակվում է Աստվածաշնչի հին ասորական ու արաբական թարգմանություններում: Քասեցիների արշավանքի նպատակը, ըստ պատմաբանների, կարող էր լինել նույնը, ինչ Կուտիումի ու Արմանի պարագայում էր, այն է՝ կասեցնել տարածաշրջանում որեւէ ուժի գերակայությունը եւ ազատություն պարգեւել բռնազավթված տերություններին (այս մասին տե՛ս շարքի նախորդ թողարկումներում): Քասեցիները, ինչպես եւ նախկինում էր, հեռանում են գրավված տարածքներից եւ Միջագետքի հյուսիսում հիմնում պետություն՝ Թերքա մայրաքաղաքով:

Հատկանշական է, որ մոտ 150 տարի անց՝ Ք.ա 1595 թ.-ին, երբ Բաբելոնը կրկին նվաճողական քաղաքականություն էր վարում, քասեցիները, Խեթական թագավորության հետ դաշնակցած, նորից են արշավում Բաբելոնի վրա եւ վերջնականապես գրավում այն: Սրանից հետո քասեցիների արքայատոհմը տեղափոխվում է Բաբելոն: Բաբելոնի գահին բազմած առաջին քասեցի հայ արքայի անունը Ագում Բ էր, ով կրում էր «արքա քասեցիների եւ աքադցիների, արքա Բաբելոնի ընդարձակ երկրի, արքա Ալմանի եւ Պադանի, կուտիների՝ խելահեղ ժողովրդի արքա...» տիտղոսաշարքը: Ստացվում է, որ նրա տիրապետության տակ էին ոչ միայն Հայկական լեռնաշխարհի հարավային մասում գտնվող Կուտիումը, Ալմանը, Պադանը, Քաշանը, այլեւ կենտրոնական Միջագետքի Բաբելոնը, Աքադը: Ավելի ուշ՝ Ք. ա. 1450-ին, քասեցիները գրավում են նաեւ Պարսից ծոցի ափամերձ թագավորությունը, իսկ դարավերջին՝ նաեւ Իրանական բարձրավանդակի հարավ-արեւմուտքում գտնվող Էլամը: Այս տիրապետությունը պահպանվում է մինչեւ 12-րդ դարի կեսերը: Այդ հարյուրամյակների ընթացքում տարածաշրջանում վերահաստատվում են խաղաղությունն ու համերաշխությունը, զարգանում են մետաղագործությունը, առեւտուրը, շինարարությունը...

Հարկ է նշել, որ պատմական այդ ժամանակաշրջանում հայկական պետությունների միջեւ դեռեւս չկար մեկ ընդհանուր պետությամբ եւ ընդհանրական անվանումով հանդես գալու գաղափարը, այլ գործում էր դաշնային սկզբունքը: Ղեկավարությունը, կախված սպասվող վտանգի կամ ծրագրվող արշավանքի ուղղությունից եւ աշխարհաքաղաքական այլ զարգացումներից, կարող էր անցնել մեկից մյուսին: Արյունակից ցեղերի եւ ժողովուրդների միջեւ տեղի էր ունենում նաեւ ազդեցության գոտիների ու տարածքների բաժանում: Այսպես, խեթերը, թեեւ բաբելոնյան արշավանքի ժամանակ թվով գերակշռող էին, գրաված տարածքները թողեցին քասեցիներին, վերջիններս հրաժարվեցին հյուսիսային տարածքներից՝ հօգուտ Միտտանիի, եւ այլն: Պարզ է, որ հզոր ռազմական ուժով աշխարհի կարգուկանոնը վերահաստատած հայ արքաների հաջողությունը մեծապես կախված էր խելամիտ եւ գրագետ ներքին քաղաքականությունից: Միայն՝ հայրենակիցների վստահությունը, հարգանքն ու սերը վայելող, սեփական ժողովրդի ազատությունը ամենից վեր դասող արքաները կարող էին նման ձեռքբերումներ ու նվաճումներ ունենալ:

Ծնթ. Քարտեզի եւ հիմնական տեղեկությունների աղբյուրը.
«Մեր հաղթանակները», հատոր Ա, Երեւան, 2008 թ., «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ:

Հիքսոս հայերի առաջնորդը Եգիպտոսի թագավոր



«Հայոց արքաներ» շարքի նախորդ թողարկման ընթացքում պատմեցինք Բաբելոնը նվաճած քասեցիների մասին: Սակայն, թերեւս, արժե հավելել, որ ռազմական առումով նման փայլուն հաջողությունը պայմանավորված էր մեր նախնիների ոչ միայն քաղաքական մտքի զարգացվածությամբ, դիվանագիտական ճկունությամբ ու հաղթողի հոգեբանությամբ, այլեւ ռազմական կարողություններով:

Հայրենիքը օտար նվաճողներից անձեռնմխելի պահող հայոց արքաները նախ եւ առաջ սեփական երկրներում էին ապահովել ստեղծագործելու, արարելու հիանալի պայմաններ, որի դրսեւորումներից էր նաեւ հայ գիտնականների, այն ժամանակների համար «հեղափոխական» համարվող գյուտի՝ մարտակառքերի ստեղծումը: Մերոնց հաղթանակը հիմնականում ապահովեց հենց այս զինատեսակը: Հայերը ոչ միայն առաջինը ձի հեծնեցին (Ք.ա 28-27 դարեր), ստեղծեցին հեծելազոր, ձուլման եղանակով հանքաքարից երկաթ ստացան (Ք.ա. 20-17 դարեր), այլեւ մտահղացան ձի լծած մարտակառքի կիրառումը պատերազմում: Ի դեպ, երկաթի մշակությունը եւ մարտակառքերի արտադրության նրբությունները երկար ժամանակ օտարներից գաղտնի էին պահվում:

Վերը նշված քասեցիների բաբելոնյան արշավանքից (տես «Հայոց արքաներ» շարքի նախորդ թողարկումը) ընդամենը 30 տարի անց՝ մ.թ.ա. մոտավորապես 1710 թվականին հիքսոսները արշավում են դեպի Եգիպտոս եւ հեշտությամբ նվաճում այն: Նման վկայություն կա Հովսեփոս Փլավիոսի մոտ, ով իր հերթին վկայակոչել է Ք.ա. 3-

րդ դարում ապրած եգիպտական քուրմ Մանեթոնին. «Արեւելքից անսպասելիորեն հայտնվեցին անհայտ ծագումով մարդիկ. նրանք հանդգնորեն գրոհեցին մեր երկրի վրա եւ հեշտությամբ նվաճեցին այն՝ առանց պատերազմի»: Մինչեւ դեպքերի հետագա շարադրանքը՝ հասկանանք ովքե՞ր էին հիքսոսները, որ աղբյուրներում նշվում են նաեւ հյուքսոս, հակսոս, հայքսոս, հայ-կսոս ձեւերով: Տեսակետ կա, որ, եթե անվանումից հեռացնենք հունարեն լեզվի «սոս» վերջավորությունը, ստացվում է հակ, հայք, հայկ: Նրանց հակ է անվանում նաեւ Եվսեբիոս Կեսարացին (260-339թթ): Այսքանը, կարծում եմ, բավարար է հիքսոսներին եւ հայերին (Հայկի զավակներին) նույնականացնելու համար: Համոզված եմ՝ թերահավատներ կլինեն, բայց եթե չի ընդունվում այս տարբերակը, կարող եք հավատալ համացանցում հեղեղի պես լցված տեղեկատվությանն այն մասին, որ հիքսոսները քուրդ էին, հրեա էին, վայրի ցեղեր էին եւ այլն: Բայց եւ ինքներդ պատասխանեք հարցին, թե ինչպե՞ս էին վայրի ցեղերը մարտակառք ստեղծել եւ ինչո՞ւ չէին Եգիպտոս հասնելու փոխարեն նվաճում նույն հայկական պետությունները կամ ասենք՝ Բաբելոնը: Եգիպտոսի պատմության մասին ցանկացած աշխատությունում նշվում է, որ մինչեւ հիքսոսների (հայերի) արշավանքը եգիպտացիներին անհայտ էր ձի վարժեցնելը, առավել եւս՝ մարտակառքը: Ահա թե ինչու հիքսոսները կարողացան Եգիպտոսը գրավել, ինչպես հայտնում է նույն աղբյուրը՝ «առանց մեկ նետ իսկ արձակելու»:

Շարունակենք: Եգիպտոսն առանց պատերազմի նվաճելուց հետո հիքսոսները Եգիպտոսի թագավոր են հռչակում իրենց առաջնորդին, ում անունն էր ՍԱԼԻՏԻՍ: Նա երկրի ողջ տարածքում զորակայաններ է հիմնում, իսկ որպես մայրաքաղաք ընտրում Նեղոսի դելտայի արեւելքում գտնվող Ավարիս քաղաքը, ամրացնում ու բնակեցնում այն: Ըստ եգիպտական քրմի վկայության՝ քաղաքում տեղակայված զորաբանակը 240 հազարանոց էր, ինչը, ըստ պատմաբանների, խիստ ուռճացված թիվ է: Հավանաբար վկայագրողը այս կերպ է փորձել բացատրել եկվորների սրընթաց հաջողությունը:

Այժմ փորձենք ենթադրել թե ինչո՞ւ հիքսոսները եկան Եգիպտոս: Մի թե սա ընդամենը նվաճողական քաղաքականությամբ է բացատրվում: Տարբերակ է, բայց չմոռանանք նաեւ այն հանգամանքը, որ մեր նախնի արքաները այլ երկրներ զինուժ էին ուղարկում միայն խաղաղություն ու կարգուկանոն հաստատելու նկատառումներով (տես «Հայոց արքաներ» շարքի նախորդ թողարկումները): Իսկ այդ ժամանակների Եգիպտոսը գրեթե բոլոր պատմագիրների մոտ նշվում է որպես ներքին երկպառակություններից թուլացած պետություն: Վերջին երկու հարյուր տարում այնտեղ 175 փարավոն էր փոխվել: Գուցե մերոնք որպես խաղաղապահնե՞ր էին գնացել: Ինչեւէ...

Հիքսոսները Եգիպտոսում մնում են մեկ դարից ավել: Մանեթոնը նշում է նաեւ մյուս հիքսոս թագավորների (փարավոնների) անունները՝ Բնոն, Ապահնան, Ապոպիս, Յաննաս, Ասսիս: Հիքսոսյան տիրապետության ժամանակաշրջանը եղավ ոչ միայն խաղաղության, այլեւ արվեստների, մաթեմատիկայի, գրի ու գրականության ծաղկման ժամանակաշրջան: Հիքսոսները եգիպտացիներին սովորեցրին ձիաբուծություն, մարտակառքերի արտադրություն, բրոնզի մշակում եւ այլն:

Հիքսոսները Եգիպտոսից հեռանում են Ք.ա 1580 թվականին: Տեսակետ կա, որ դա եգիպտական ապստամբության հետեւանքով էր, բայց եւ նշվում է, որ ապստամբները չեն կարողացել գրավել Ավարիս մայրաքաղաքը եւ սկսել են բանակցություններ, որն ավարտվել է հաշտությամբ:

Հիքսոսները (Հայկի զավակները) այլեւս անելիք չունենալով օտար եզերքներում՝ ինքնակամ հեռանում են դեպի հյուսիսային Միջագետք ու Հայկական լեռնաշխարհի հարավ՝ դեպի հայոց Հայրենիք:

Միտաննի հայկական պետություն

Ք.ա. 16-րդ դարում մեր տարածաշրջանում գերակայության է հասնում Միտաննի անունով պետությունը, որը նույնպես բավականին ընդգրկուն էր, ներառում էր Առաջավոր Ասիայի, Հյուսիսային Միջագետքի, Փոքր Ասիայի ու Հայկական լեռնաշխարհի զգալի տարածքներ:

Մովսես Խորենացին Հայկազուն արքաների ցանկում առանձին նշում է Պարետով սկսվող ու Վաշտակով ավարտվող շարքը, որոնց գահակալության ժամկետները նույնությամբ համապատասխանում են Միտաննի (այլ աղբյուրներում՝ Մահիտանի, Խանիգալբատ, Խալիգալբադ, Նահարինա) պետության գոյության ժամանակաշրջանին: Այն որ Պարետը պատմագրության մեջ



որպես Միտաննիի առաջին արքա հիշատակվող Պարատառնան է, իսկ Վաշտակը՝ վերջին գահակալ Վասաշատտան, կարծում եմ ապացուցելու հարկ չկա: Նույնն է նաեւ Խորենացու նշած Սոսանվերի պարագայում, որը համարժեք է Սաուսադատարին՝ Միտաննիի երկրորդ հզորագույն արքայի անվանը: Մասնագետներն ասում են, որ «դատ(ար)»-ը «նվեր», «տուրք» բառերի հոմանիշն է: Նույն անուններն ու ժամանակաշրջանն է նշում նաեւ հայ նոր պատմագրության հիմնադիր Միքայել Չամչյանը:

Անցած անգամ անդրադարձանք նաեւ այն փաստին, որ եգիպտացիներին ձի հեծնել ու մարտակառք պատրաստել սովորեցրել էին Հայկի որդիները (հայքսոսները, հիքսոսները): Եվ ահա, եգիպտական աղբյուրները նշում են, որ մարտակառքերի համար հատուկ փայտանյութը բերվում էր Նահարինա երկրից, շեշտում այնպիսի ծառատեսակներ, որոնք աճում են միայն Տրապիզոնից հարավ ու Արածանի ստորոտին:

Այսքանը Միտաննի պետության տեղագրության եւ հայկական պետությունլինելու մասին: Այժմ անդրադառնանք պատմական դեպքերի ընթացքին ու հայոց հզոր արքաների դերակատարությանը: Նրանք, անշուշտ, իրենց նախորդներից ժառանգել էին ժամանակի աշխարհի կառավարման առաջադեմ եղանակներն ու ձեւերը, ավելի կատարելագործելու ստեղծելու ժեղ պետություն, կուռ պետականկառուցվածք ու հպատակների հավատարմությունը վայելելու ունակ համակարգ՝ հենված մեծ ընտանեկան համայնքների, խուրրիերեն՝ դիմտուների (աշտարակ) վրա, որոնք գտնվելով նահապետի (էվրի) տնօրինության տակ, իրենց հերթին բաժանված են եղել ընտանիքի չափահասների միջեւ: Համայնքի բոլոր անդամները՝ մեկը մյուսին օգնելով ստանում էին երկրագործությունից ու արհեստագործությունից ստացած եկամուտները, միասին վճարում համայնական (պետական) պարհակները, զինվորագրու տալու պարտավորությունները, փոխարենը ստանում ազատ ապրելու, ստեղծագործելու, պաշտպանված լինելու երաշխիք:

Միտաննիի հզորության ժամանակաշրջանը սկսվում է Պարետի եւ նրա որդի Սոսանվերի գահակալությունից (Ք.ա 15-րդ առաջին կես): Նրանք՝ Եգիպտոսի, Բաբելոնի, Խեթերի երկրի արքաների պես կրում էին «Մեծ թագավոր» տիտղոսը: Հայտնի է, որ Սոսանվերը գրավում է Աշուրը եւ իր մայրաքաղաք Վաշշուգանե տանում Ոսկե դարպասը: Տիրանալով նոր տարածքների, այնտեղ նշանակելով իր կառավարիչներին, նա էլ ավելի է ընդլայնում երկրի սահմանները, հասնում մինչեւ ներկայիս Պաղեստին: Ք.ա. 1450-ական թվականներին դեպի մեր տարածաշրջան են արշավում եգիպտական զորքերը եւ երկու պետությունների միջեւ սկսվում է երկարատեւ պատերազմ: Սկզբում որոշակի հաջողություններ են ունենում Թութմոս Գ փարավոնի զորքերը, սակայն իրավիճակը մերոնց օգտին է փոխվում հաջորդ փարավոնի՝ Ամենհոթեփ Բ-ի օրոք: Սոսանվեր արքային հաջողվում է եգիպտացիներին հետ մղել գրավյալ տարածքներից եւ արեւելամիջերկրածովյան ափազանի մեծ մասն ազատագրել: Մի քանի տասնամյակ բախումները շարունակվում են առանց որոշակի փոփոխությունների: Ի վերջո, հաջորդ փարավոնը՝ Թութմոս Դ-ն (Ք.ա 1400-1390 թթ.) հաշտություն է առաջարկում, որն ընդունվում է Միտաննիի արքա Արտադամայի կողմից (Ք.ա 1400-1380 թթ.): Հետաքրքիր է, որ հաշտության, այսօրվա բառով ասած՝ պայմանագրի կետերից մեկով խաղաղությունն ապահովելու համար հաստատվում են խնամիական հարաբերություններ: Երկար ժամանակ Միտաննիի արքայադուստրերը կնության էին տրվում Եգիպտոսի փարավոններին: Նրանցից ամենահայտնին ու նշանավորը Նեֆերտիտին էր՝ Էխնաթոնի կինն ու Միտաննիի արքա Տուշրատտայի (Ք.ա մոտավորապես 1370-1350 թթ.) դուստրը: Տեսակետ կա, որ նրա իսկական անունը եղել է Տադուհեպա, իսկ Նեֆերտիտի եգիպտերեն նշանակում է «Գեղեցկուհին է եկել», ինչը նույնպես ապացուցում է նրա եկվոր լինելը:

Ավարտելով Միտաննիի համառոտ պատմությունը՝ նշենք, որ հայկական այս պետությունը գոյատեւեց մինչեւ Ք.ա 1250-ական թվականները: Միտաննիի մեծ մասն անցավ Ասորեստանին, բայց հյուսիսում սկսել էր հայերի մեկ այլ պետության՝ Հայասայի փառքի ու հաղթանակների ժամանակաշրջանը, որի մասին կպատմենք հաջորդ անգամ:

Վարդան ՕՆԱՆՅԱՆ

Հովհաննես ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Անավարտ պատմություն

Այս աշխարհում ամեն ինչ այնպես գեղեցիկ է, եթե միայն մենք չապականենք: Ո՞ւմ խոսքերն էին. Արամը մտքում անհոդհատ կրկնում և ուզում էր հիշել հեղինակին, բայց՝ ապարդյուն:

Ի՞նչ պարտադիր է, թե ով է ասել. մի փոքրանց փորձեց մեղմել ներքին լարումը: Կարևորը, որ միտքը խելոք է: Եվ, ուսանողական տարիների սովորությամբ, նստեց նշումներ կատարելու: Նոթատետրում անհավասար, անկանոն շարքերով, ջնջումներով ու ընդգծումներով գրառումներ էին. գրեթե ազատ տեղ չկար: Վերջին տողերն իրենն էին. «...Ատամը հանելիս անզգայացնող են ներարկում: Մինչդեռ հոգին, երբեմն, հանում են... առանց անզգայացնելու...»:

Անմարդկային է: Ահավոր: Սարսափելի: Անտանելի... Եվ, թեև չնայած առաջացած տարիքին չգիտեր ծխախոտն ինչ է, այդ պահին մեջն արթնացավ ծխելու անզուսպ ցանկությունը: Ասես դրանով պիտի հավասարակշռեր ամենը, ինչ համերաշխ ու անհամերաշխ է այս աշխարհում:



Մանրիկ մաղող անձրևի տակ, միակ անձրևանոցով անհույս պատսպարվելով, Լիլիթի հետ իջել էին Աբովյան փողոցով, անցել Մաշտոցի պողոտա, հարակից մեծ ու փոքր պուրակներ. աջ ու ձախ, ամեն քայլափոխի նախկինում հրավիրող սրճարանները կարծես չքացել, չէին էլ եղել: Ասենք չէին չքացել: Պարզապես դրանք մի տեսակ մարդաշատ էին: Իսկ այդպես հարմար չէր:

Վերջապես, ֆրանսիական դեսպանատան մոտ, համեստ կահավորանքով, առանձնապես աչք չզարնող սրճարան նկատեցին:

- Այս ի՞նչ գեղեցիկ անուն են ընտրել, - Լիլիթի հետ Արամը թեքվեց բացօթյա սրճարան, որի ճակատին գեղագարդ գրված էր՝ «ԾԻԾԵՌՆԱԿ»:

- Ծիծեռնակի հետ՝ «ԾԻԾԵՌՆԱԿՈՒՄ», - կատակեց Արամը:

Լիլիթը չհասցրեց պատասխանել: Եվ ի՞նչ պատասխաներ. օտար, զննող հայացքներից մեկ-երկու ժամ ազատվելու պատեհությունը, սիրո մոտիկությունն այն երջանկությունն էին, որին հասնելու համար հեքիաթի հերոսները աշխարհներ, ծովեր էին կտրում-անցնում:

- Կյա՜նքս... , - Արամն աղջկա ձեռքը վերցրեց դողացող ափի մեջ:

- Կյա՜նքս... Իսկ այդ կյանքում այնքան փուշ ու տատասկ, փշալարեր կան, - Լիլիթի մրահոն աչքերում տամկությունը լճացավ:

- Կանցնեմ փուշ ու տատասկի միջով, կքայլեմ փշալարերի վրայով, միայն թե միշտ մոտս լինես, չլքես, չհեռանաս, - Արամն զգաց, որ ձայնն իր համար անգամ մի տեսակ անճանաչելի, վարանոտ հնչեց:

Արամն իրենց ծանոթության պահից չէր թաքցրել, որ ընտանիք ունի, ամուսնական առագաստին հավատարիմ մնալու խոստում ունի տված:

Լիլիթն էլ լավ մայր լինելու հավատամքն ուներ: Մինչև որ եկավ... ՍԵՐԸ:

Եկավ մանրիկ, հուշիկ քայլերով, ու աննկատ ձևավորվեց սրտերում: Բնավորվեց այնպես մաքրամաքուր, որ թվում էր՝ Աստված մեղքը չնկատելու տվեց:

- Կքայլեմ փշալարերի վրայով, - ասես ինքն իրեն համոզելու համար կրկնեց Արամը: - Կրկնեց անհնարինը հնարավոր դարձնելու ակնկալությամբ և հավատքով:

- Աստվածուհի՜ս, - շոյեց Լիլիթի թաց վարսերը:

- Ինձնից ի՞նչ աստվածուհի: Աստծո դեմ մի՛ գնա, - Լիլիթի վախվորած շշունջը Արամին վերցրեց իր թևերին ու խելացնոր թռիչքով տարավ այնպես, որ թեթև գլխապտույտ զգաց:

- Երա՜զս, - Արամի սիրտը չէր կարող չտեսնել երջանկությունը՝ այնքա՜ն մոտիկ, այնքա՜ն իրական...

- Բայց ինչո՞ւ երազ, - Լիլիթի աչքերում խոնավությունը խտացավ: Մի՞թե իրական չենք: Մի՞թե միասին չենք:

Նրանք միասին էին՝ երկուսով: Եվ մեկ էլ Սարասատեի «Գնչուական մեղեդիները»:

Մեղեդիներն իրենցն էին: Թվում էր ջութակը գուշակում էր, և հնչյունները թափառիկ, մեղմանու՜շ, անորսալիության աստիճան նուրբ էին, որոնց անդրադարձը արձագանքում էր հոգիներում ու տանում հեռու, անծանոթ եզերքներ, որտեղ չգիտեին ինչ է փուշ ու տատասկը, ինչ է փշալարը: Եվ այնտեղից այլևս չկար վերադարձ...

Պետք է հավատալ երջանկության հնարավորությանը՝ երջանիկ լինելու համար: Սա Արամի համար վերացական միտք չէր, այլ՝ կյանքի սկիզբ: Այդպես եկավ ՍԵՐԸ: Եկավ խենթի նման, գնչուհու նման, Լիլիթի տեսքով: Եկավ անպարագիծ ու լուսավոր կարոտներով, անեզր, արևալույս հորիզոններով: Եկավ ու տրամաբանության համար գործելու դաշտ չմնաց: Ասպարեզը մնաց միայն սրտին: Իսկ սիրտը չէր կարող սխալվել:



Ինչի մասին էին խոսում ամեն օր, իրենք էլ չգիտեին: Խոսակցություններին հատկացված-սահմանված ժամանակ չկար: Օրվա 24 ժամն իրենցն էր, ամեն ժամվա 60 րոպեն իրենցն էր, րոպեների վայրկյաններն իրենցն էին...

Երեք օր էր, սակայն Արամի հեռախոսը



23

22➲

լռում էր: Ժամանակի վազքը դանդաղեց: Հետո, ասես մեկեն կանգ առավ: Ինչո՞ւ:

- Ոչինչ էլ չէր պատահել, - զանգահարելու փոխարեն վերջապես երևաց Լիլիթը:

- Երեք օր՝ ոչ մի զանգ...

- Դե, չէր ստացվում...

- Ինչպե՞ս, - Արամն զգում էր, որ Լիլիթն անկեղծ չէ:

- Գիտե՞ս, քեզ պատմել եմ ընկերուհուս և ամուսնու լարված հարաբերությունների մասին, - ի վերջո Լիլիթը չկարողացավ չխոստովանել ճշմարտությունը: Ընկերուհիս խնդրեց իր հետ գնալ հայտնի գուշակի մոտ: Չցանկացա մերժել: Քաղաքի կենտրոնից ոչ հեռու մի խորհրդավոր շենք էր, խորհրդավոր սենյակ: Ոչ պակաս խորհրդավոր էր գուշակի մուտքը հարևան սենյակից:

- Դու մեղք ես գործում, և դրա համար Աստված քո կուրծքը կճեղքի, - բարևի փոխարեն թափանցող հայացքը անմիջապես ինձ հառեց: Ես ցնցվեցի...

Սիրել երկյուղով, որ գործած մեղքի համար սիրածդ էակը այդպես ծանր պիտի հատուցի: Դա Արամի համար արդեն երջանկություն չէր:

- Բայց չէ՞ որ Աստված ՍԵՐ է: Էլ ինչու՞ դրա համար պատժի, - մրմնջաց մի բան ասելու համար: Հետո հիշեց Նոր Կտակարանից Պողոս առաքյալի խոսքը. «Եվ եթե մարգարեություն անելու շնորհ ունենամ և գիտենամ բոլոր խորհուրդներն ու ամբողջ գիտություն, և եթե ունենամ ամբողջ հավատը՝ մինչև իսկ լեռներ տեղափոխելու, բայց սեր չունենամ, ոչինչ եմ...»:

- Դրա համար էլ եկա, - գլուխը խոնարհեց Լիլիթը: Արի ոչինչ չպայմանավորվենք: Թող ժամանակը լինի մեր դատավորը: Երբ ժամանակը գա...

Չգժտվեցին: Բայց, ինչպես ասում են նման դեպքերում, քարը նետված էր ջրհորը: Ու ժամանակն էլ սպասել չտվեց:

Մայրաքաղաքում էին՝ տարբեր գործերով:

- Ժամը 3-ին կզանգեմ, - խոստացավ Լիլիթը:

Րոպեները, վայրկյանները դանդաղ, բայց... անցնում էին: Հետո ժամանակի սահքը դադարեց, սլաքները երևի կանգ առան: Ժամը 3-ն էր, իսկ զանգը չկար: Զանգն ուշանում էր... և այլևս դադարում Արամի բարեկամը մնալ: Հիշեց մի քանի օր առաջ իրենց խոսակցությունը, Լիլիթի տխրությունը. «Թող ժամանակը լինի մեր դատավորը: Երբ ժամանակը գա...»

Ժամանակն իրոք իրեն սպասել չտվեց: Ժամանակը եկավ և թեև փորձությունից փորձություն հնարավոր է մարդն ուժեղանա, բայց երբեմն ուժերը կարող են սպառվել: Եվ Արամը նախընտրեց... հեռացումը...

Հեռացումը արդարության պսակն էր: Այս դեպքում՝ անցանկալի պսակը: Խոսքերն այլևս ի զորու չէին թարգմանելու հոգու տառապանքն ու տվայտանքը: Խոսքերը վերջացել էին. սկսվել էր լռությունը: Սկսվել էր լռության հրաշքը: Մեծ լռության:

- Աստված եթե խոսեր ու մենք լսեինք նրա ձայնը, այդ դեպքում իրապես կդադարեր նրա խորհրդավորությունը, - մտածեց Արամն ու անջատեց նվագարկիչը: Սիրտն այլևս ընդվզում էր ունկնդրել «Գնչուական մեղեդիներն» անգամ...

Հետաքրքիր է իմանալ

Ասենք.

Ամուսնության առաջին տարեդարձը անվանում են բամբակե, երկրորդը՝ թղթե, երրորդը կաշվե, չորրորդը ծաղկե, հինգերորդը փայտե, վեցերորդը շաքարե, յոթերորդը մեղրե, ութերորդը բրոնզե, իններորդը հիմնական կամ գլխավոր, տասներորդը անագե, տասնմեկերորդը պողպատե, տասներկուերորդը քաթանե, տասներեքերորդը ժանյակե, տասնչորսերորդը փղոսկրե, տասնհինգերորդը բյուրեղապակե, քսաներորդը ճենապակե, քսանհինգերորդը արծաթե, երեսուներորդը մարգարտե, երեսունհինգերորդը մարջանե, քառասուներորդը սուտակե, քառասունհինգերորդը շափյուղե, հիսուներորդը ոսկե, հիսունհինգերորդը ադամանդե, վաթսուներորդը ալմաստե:

ԱՄՆ-ի փարօրինակ օրենքներն ասում են.

ԱՄՆ Միչիգան նահանգում կինն իրավունք չունի առանց ամուսնու թույլտվության մազերը կտրել:

Արիզոնայում չամուսնացած կանայք իրավունք չունեն միայնակ գնալ ձկնորսության:

Նույն նահանգի Հեյդեն քաղաքում կնոջը բանտ կնետեն, եթե նա բացի ամուսնու նամակները:

Փենսիլվանիայում չի թույլատրվում, որ մի տան մեջ 16-ից ավելի կին ապրեն: Օրենքի հեղինակների կարծիքով, 17 և ավելի կնոջ դեպքում գործ ունենք ոչ թե տան, այլ հասարակաց տան հետ:

Նյու Մեքսիկոյի Հարթֆորդ քաղաքում արգելվում է չսափրված վիճակում հայտնվել հասարակական վայրում: Օրենքը հետաքրքիր է այնքանով, որ վերաբերվում է…կանանց:

Քենթուկիում կնոջն արգելվում է փողոցով քայլել լողազգեստով, եթե նրան չեն ուղեկցում առնվազն երկու ոստիկան, կամ եթե նրա ձեռքին չկա փայտե մահակ:

Ֆլորիդայում կինը պետք է տուգանք վճարի, եթե հանկարծ մազերը չորացնելիս քուն մտնի:

Կամ թե.

Ալաբամայի Ջասպեր քաղաքում ամուսինն իրավունք ունի մահակով ծեծել կնոջը, եթե մահակը նրա բութ մատից հաստ չէ:

Արկանզասում ամուսիններն իրավունք ունեն ամիսը մեկ անգամ ծեծել իրենց կանանց:

Լոս Անջելեսում ամուսինն իրավունք ունի կնոջը գոտիով ծեծել, եթե գոտու լայնությունը չի գերազանցում 2 դյույմը:

Իլինոյսի Յուրիկ քաղաքում բեղեր ունեցող տղամարդն իրավունք չունի համբուրել կնոջը:

Առաջնորդվում են եւ այսպես.

Օկլահոմայում շներին արգելվում է 3 «հոգուց» ավելի հավաքվել նույն տեղում, եթե քաղաքապետի կողմից ստորագրված հատուկ թույլտվություն չունեն:

Այդահոյում արգելվում է ուղտի վրա նստած ձկնորսությամբ զբաղվել:

Բալթիմորում չի կարելի առյուծի հետ թատրոն գնալ:

Ալաբամայում արգելվում է մեքենան վարել աչքերը կապած վիճակում:

Ալյասկայում արգելվում է ինքնաթիռից դուրս շպրտել կենդանի եղջերուին:

Կոնեկտիկուտի Հարթֆորդ քաղաքում չի կարելի փողոցն անցնել ձեռքերի վրա:

Օհայոյում օրենքով արգելվում է ձկներին ոգելից խմիչքներ առաջարկել:

Այնպես որ, ԱՄՆ վիզա ստանալ երազող մեր հայրենակիցները լավ կանեն մեկնելուց առաջ ծանոթանան այս փարօրինակ օրենքներին:

Հայկական զանգերը

Զանգի գյուտն արվել է 4-րդ դարում Իտալիայի Կամպանիա մարզի Նոլա քաղաքում:

Այդ պատճառով էլ եվրոպական մի շարք լեզուներում զանգը կոչվեց կամպանիա, իսկ լատիներեն՝ նոլա:

Հայաստանում զանգի մասին առաջին հիշատակությունները կապված են զանգը օրհնելու հետ, որն արել է 5-րդ դարի հայոց կաթողիկոս և իմաստասեր Հովնան Մանդակունին: Մինչ այդ զանգի դեր է կատարել կոչնակը կամ ժամահարը: Կոչնակին երկար դարեր հարևանել է զանգը: Զանգի մասին շատ քիչ տեղեկություններ կան:

Զանգը Հայաստանում գործածվել է 10-րդ դարում, սակայն իր հաստատուն տեղն է գրավել 12-րդ դարում: Մեզ են հասել այդ ժամանակներում ձուլված և Տաթևի վանքում գործածված զանգեր: Պահպանված ամենահին հայկական զանգերը երկուսն են: Նրանցից մեկը ձուլվել է 1302, մյուսը՝ 1304 թվականին: Երկուսի վրա էլ կան հայերեն արձանագրություններ, ըստ որոնց դրանք ձուլել է տվել կամ գնել է Ստեփանոս Օրբելյանը:

Հայաստանում զանգը պատրաստել են պղնձից, որը հնչուն մետաղ է: Գրիգոր Տաթևացին հաղորդում է, որ հայկական զանգը ձուլելու ժամանակ խառնել են արծաթ, որն ավելի հնչեղ էր դարձնում զանգի ձայնը:

Հայ ժողովուրդը զանգի մասին շատ զրույցներ է ստեղծել: Ահա դրանցից մեկը: Սյունաց աշխարհի Խոտ գյուղի մոտակայքի վանքը մի մեծ զանգ ուներ: Ամեն անգամ թշնամու հայտնվելուն պես զանգը ղողանջում էր, և Սյունյաց քաջերը, զորք կապած, ընդառաջ էին գնում թշնամուն և հաղթում: Բայց Հայաստան է արշավում Լենկ-Թեմուրը, կաշառում է մի դավաճանի, որը կտրում է Սյունյաց աշխարհի նշանավոր զանգի լեզվակը: Թշնամին հարձակվում է Սյունիքի վրա: Մարդիկ աշխատում են հնչեցնել զանգը և մարտի կանչել հայոց քաջերին, սակայն զանգերը լռում են, և ժողովուրդը հուսահատված բացականչում է.

«Զանգը զուր է, զանգն իզուր է»: Ասում են՝ դա է պատճառը, որ այդ երկիրը կոչվեց Զանգեզուր:

էջը կազմեց Լեւոն ԽԱՉԱՏՐՅԱՆԸ

Ազգային մշակույթի՝ ժողովրդական արհեստների, արվեստի ու գիտության գանձերը սերունդներին փոխանցելու ու պարգայնելու հրաշք գործիքը ուսույանելն է



Կարինե Պապիկյան: Վանաձորի Խ. Աբովյանի անվան դպրոցի ոսկե մեդալակիր, Երևանի պետական համալսարանի քիմիայի և հասարարական մասնագիտությունների ֆակուլտետների շրջանավարտ, արվեստաբան, Երևանի Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի մանկավարժության ամբիոնի դասախոս, Կրթության ազգային ինստիտուտի Լոռու մասնաճյուղի մասնագետ, ուսումնական մի շարք ձեռնարկների և բազում գիտական հոդվածների հեղինակ Կարինե Պապիկյանը հաջողությամբ պաշտպանեց «Գեղարվեստական համակարգի առարկաների դասավանդման ժամանակակից տեխնոլոգիաները» ատենախոսությունը:

ՀՀ Բարձրագույն որակավորման հանձնաժողովը Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի մասնագիտական խորհրդի որոշմամբ Կարինե Պապիկյանին շնորհեց մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Գիտական կոչում եւ նոր ուսումնական ձեռնարկ

Կարպետագործությունն ու գորգագործությունն ինտելեկտի ու ճաշակի զարգացումներն իրենց մեջ կրող գեղարվեստական գործունեության ոլորտներ են և իրենց երանգներն են հաղորդել ազգային գեղարվեստական մտածելակերպին:

Կարպետն ու գորգը հայ հանճարեղ ու արարող մտքի գեղարվեստական խորհրդանիշներն են, որոնց վրա դրոշմված են ազգային ու համամարդկային ճաշակը, գեղեցիկի նուրբ զգացողությունը, հայ ժողովրդի պատմությունը, կենսափիլիսոփայությունը, արարող ձեռքի ճկուն իմաստությունը: Ավանդական գեղեցիկ ուրվագծերը, ինքնատիպ զարդանախշերը, դրանց պաճուճական միահյուսությունները ձեռագործ գորգերի վարպետների վառ երևակայության ակնառու վկայությունն են:

Հայոց մշակույթի գանձարանն նշանակալի ներդրում և գեղեցիկը պահպանելու, ժողովրդի գեղարվեստական ճաշակը, արարող ձեռքի հանճարեղ զորությունը սերունդներին փոխանցելու ազնիվ մղումն է արվեստագետ-մանկավարժ գիտնական Կարինե Պապիկյանի հեղինակած և հերթական լույսընծայած «Հայկական կարպետներ և գորգեր» ուսումնական ձեռնարկը:

Ձեռնարկի մանկավարժական ուղղվածությունը հմտորեն զուգորդված է հայկական գորգի և կարպետի ստեղծման պատմությանը, մշակութային դերի արժևորմանը: Այն հայկականկան դեկորատիվ կիրառական արվեստին վերաբերող նշանակալից աշխատություն է:

Կարինե Պապիկյանի պաշտոնական ընդդիմախոս, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՌԴ կրթության ակադեմիայի ակադեմիկոս, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Լեմս Ներսիսյանը նշում է. «...Կ. Պապիկյանի ատենախոսությունը ժամանակահունչ, խորաիմաստ հետազոտություն է, որում մենագրորեն լուծում է տրվում սովորողների գեղագիտական դաստիարակության խնդրին: Սույն ատենախոսությունը, տրամաբանորեն նախամտածված ծրագրի համապատասխան, ներառում է հասարարական-մշակութային կարևոր նշանակություն ունեցող խոշոր գիտական հիմնահարցի բազմամյա ուսումնասիրություն և մշակում:

Գիտական ղեկավար, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հրավարդ Հակոբյանը հավաստիացնում է՝ «Լինելով Կրթության ազգային ինստիտուտի մասնագետ՝ նա մշտապես զբաղվել է կրթության որակի, դասավանդման արդյունավետության բարձրացման հարցերով, իսկ հայցորդության տարիներին ավելի է խորացել հիմնախնդրի մեջ, կատարել է սեփական հետազոտություններ... Նա հիանալի տիրապետում է իր մասնագիտությանը, իր բնույթով նորարար է և կենսունակ գաղափարների կրող»:

Աշխատանքի առավելությունների շարքին կարելի դասել նաև այն հանգամանքը, որ հեղինակը հիմնարար փոփոխության է ենթարկել գեղարվեստական համակարգի առարկաների դասավանդման բովանդակությունը՝ կրտսեր դպրոցում ինտեգրելով մի շարք առարկաներ:

Կարինե Պապիկյանն իր աշխատանքային 27 տարիների ընթացքում շատ բանի արդեն հասել է, բայց գիտի, որ եղածը սահման չէ: Հետաքրքրությունների շրջանակի /արվեստ, հոգեբանություն, բնական և հասարարական գիտություններ/ հետևողական ընդլայնումը Կարինե Պապիկյանին հաղորդում է բարձր մտավոր հատկություններով և հնարավորություններով օժտված անհատի նկարագիր:

«Գործարար» ամսագրի ստեղծագործական խումբը սրտանց շնորհավորում է Կարինե Պապիկյանին՝ մաղթելով նորանոր ձեռքբերումներ ու հաջողություններ:

«Հայերը և հույները երեք մեծ քաղաքներում՝ Կոնիայում, Կեսարիայում և Սվասում (Սեբաստիա) գործում էին աշխարհի ամենագեղեցիկ և ամենանուրբ գորգերը»:

Մարկո Պոլո, 13 դար

Հայկական գորգեր

Անհիշելի ժամանակներից Հայաստանը հռչակված էր գունագեղ գորգերով: Հնագիտական պեղածո նյութերը վկայում են, որ գորգի առաջացումը կապված է մարդկային պատմության արշալույսի հետ: Հավանաբար, Հայաստանն է եղել այս բարդ հյուսվածքի առաջացման բնօրրաններից մեկը: Համենայն դեպս, պատմական ոչ մի աղբյուր դրան հակառակ տեղեկություն չի տալիս, իսկ 5-13 դարերի աղբյուրները վկայում են, որ այդ ամբողջ ժամանակահատվածում՝ շուրջ ութ դար, աշխարհի լավագույն գորգերի հյուսման ասպարեզը եղել է Հայաստանը:

Հայկական գորգերի նախշերի բազմազանությունը, հարուստ գունաշխարհն աշխարհում իրենց նմանը չունեն: Հայ գորգագործները ստեղծել են արվեստի գործեր, որոնց մեջ արտացոլվում են ժողովրդի հարուստ անցյալը, մշակույթը, կենցաղն ու բարքերը:

Հայկական գորգերի վրա երբեք չի հաջողվի միանման զարդանախշային մոտիվ տեսնել: Մուգ լայն եզրաշերտը, վառ գույնի բրդից գործված խայտանկարները, մեդալիոնները, որոնց միջև գործված են ոճավորված ծաղիկներ, ավելի զգալի են դարձնում կենտրոնական դաշտի գունային հնչողությունը:

Ավանդական գեղեցիկ ուրվագծերը, ինքնատիպ նախշերը, դրանց պաճուճական միահյուսությունները ձեռագործ գորգերի վարպետների վառ երևակայության ակնառու վկայություններն են:

Առաջավոր Ասիայի և Փոքր Ասիայի արվեստներին ազգակից մի

հնագույն շերտ ձևավորում է այն գեղարվեստական մտածողությունը, որ ընկած է հայկական գորգերի հիմքում: Հիմնական արտահայտամիջոցները վերացարկված, խորհրդանշանների վերածված աստեղային նշաններն են, չորս աշխարհաստեղծ տարրերի խորհրդանիշները, արական և իգական սկիզբների հետ կապված զարդանախշերը, կենդանակերպ, թռչնակերպ և մարդակերպ նախշերը, որոնք բարդ հորինվածքներում ի մի են բերված կենաց ծառերի, տիեզերակազմական գաղափարների շուրջը:

Արևելյան գորգերի համակարգում հայկական գորգերն առանձնանում են ոչ միայն իրենց զարդանախշային ինքնատիպություններով, այլև հիշատակություն-արձանագրություններով, որոնք բնորոշ են հայկական ձեռագրերին, ճարտարապետական կոթողներին, դեկորատիվ-կիրառական արվեստի իրերին: Սա և ազգային ոգու դրսևորում է, գեղագիտական արտահայտչականության այն մակարդակը, երբ գորգի հարդարանքը, նրա ընդհանուր կերպարը արտահայտում է ազգային մշակույթի հետ ունեցած նրա ներքին կապը, նրա գաղափարափիլիսոփայական էությունը, որի շնորհիվ հնարավոր է դառնում առանձնացնել հայկական գորգերը:



Հազարամյակներ ժողովուրդը գորգեր է հյուսել, հաջորդել են դարերը, փոխվել ոճերը` միաժամանակ հարազատ մնալով հայ արվեստի ոգուն, մտածողությանը:

Հնագույն հայկական գորգերից շատերը պահպանվել են ոչ միայն աշխարհի ամենահռչակավոր թանգարաններում, այլև Վերածննդի նկարիչների ստեղծագործություններում` որպես նրանց վրձնած գեղարվեստական միջավայրի ամենակարևոր տարրերից մեկը:

Դեռ վաղ միջնադարից Արևմտյան Եվրոպայի երկրներում որպես արևելյան գորգի հոմանիշ գործածվում է կարպետ/carpet/ տերմինը, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ հայկական կարպետ բառի ժողովրդական ձևը:

Միջին հայերենում որպես գորգ բառի հոմանիշ, ընդհանուր առմամբ օգտագործվում էր կարպետ տերմինը:

Ակադեմիկոս Հ. Օրբելին ենթադրում է, որ ռուսերեն «**КОВЕР**» տերմինը նույնպես ծագում է հայերեն կարպետ բառից, որը, ըստ երևույթին, նույնպես կապված է հայկական գորգային գործվածքը 11-13 դարերում Ռուսաստան ներթափանցելու երևույթի հետ:

Արաբական աղբյուրները նշում են. «Գորգագործությամբ հայտնի են մի շարք քաղաքներ` Դվինը, Վանը, Կարի-կալան /Կարին-էրզրումը/ և ուրիշներ»:

Իսկ վենետիկցի Մարկո Պոլոյի հուշերի մեջ ուշագրավն այն է, որ նրա մանրամասն հաղորդումների մեջ ոչ մի հիշատակություն չկա այլ երկրների գորգերի մասին. նա հանգուցավոր գորգեր տեսել է միայն Մերձավոր Արևելքի Կոնիա, Կեսարիա և Սեբաստիա քաղաքներում, ուր ապրում էին հայեր, հույներ:

Գորգը հայ հանճարեղ ու արարող մտքի գեղարվեստական խորհրդանիշն է, որի վրա դրոշմված է ազգային ու համամարդկային ճաշակը, գեղեցիկի նուրբ զգացողությունը, հայ ժողովրդի պատմությունը, կենսափիլիսոփայությունը, արարող ձեռքի ճկուն իմաստությունը:



Վանաձորի թիվ 10 դպրոցի գորգագործական արհեստանոցը, Գորգ Արցախ 18 դար



Վանաձորի թիվ 10 դպրոցի գորգագործական արհեստանոցը, Արծվագորգ /հատված/

Ամեն մի ժողովուրդ իր կնիքը, իր զարդանկարներն ու իր սիրած գույներն է դնում գեղարվեստական արտադրանքի մեջ: Դարերի ընթացքում պահպանված ավանդներն արտահայտում են հայ ժողովրդի ճաշակը, նրա գեղարվեստական ու ստեղծագործական ինքնատիպությունը:Զարդանկարայինուգունայինլուծումներըպահպանվել են դարերի ընթացքում: Միասնական ոճի պահպանման հետ կարելի է հանդիպել նորանոր ստեղծագործությունների: Հիմնական զարդանկարները կրկնվում են ամեն տեղ` Վասպուրականից Լոռի, սակայն ամեն դարաշրջանում իրեն հատուկ տարբերակներով, զարդանկարային նորանոր կառուցվածքներով:

Հայկական ծեսեր

Մատաղ /աղքատաց կերակուր/

Մատաղն այսօր կորցրել է իր նշանակությունը: Հաճախ այն վերածվում է խնջույքի, որի վերջում գինովցած մարդիկ մոռանում են նույնիսկ հավաքվելու պատճառը:

Մատաղը լինում է շնորհակալական, որը «աղքատաց կերակուր» է կոչվում: Շնորհակալական մատաղն արվում է, երբ որևէ տհաճ պատահարից են փրկվում, նեղությունից են դուրս գալիս, կամ ինչ-որ մի ցանկություն են ունենում և հետո իրականացած տեսնում:

Մատաղը պետք է մաքուր սրտով կատարել, եթե որևէ մեկից խռով եք, մատաղ անելուց առաջ պետք է հաշտվեք, կամ, եթե մոտ է ապրում, դա իրագործեք մատաղից բաժին հանելով:

Մատաղը պետք է բաժանել աղքատներին, ծերերին, հիվանդներին, մանկատներին և երբեք չվերածել խնջույքի: Մատաղ անելիս ոչ մի տեսակի ոգելից խմիչք չօգտագործել:

Անպայման չէ զոհագործությունը, կարելի է անասուն չմորթել, այլ դրա արժեքի չափ դրամ տալ աղքատ մի ընտանիքի, ծերանոցի կամ մանկատան:

Պահք /պաս/

Պաս բառի իսկական իմաստն է՝ զգուշանալ, ինքն իրեն մի բանից զրկել, ժուժկալել:

Հավատացյալների առողջության և հոգևոր զարգացման համար մեծ կարևորություն ունի պահեցողությունը:

Սուրբ գրքում օրերով ծոմապահության բազմաթիվ օրինակներ կան: Հովհաննես Մկրտիչը անապատական կյանքի ընթացքում սնվել է միայն մարախով և վայրի մեղրով, ինքը՝ Տեր Հիսուս Քրիստոսը, քառասուն օր ծոմ պահեց իր մկրտությունից հետո:

«Հայր Մեր»-ի մեկնության մեջ Եղիշեն ասում է. «Մարմնիդ կամքով մի թավալվիր երկրի վրա, կտրիր և նետիր քեզանից ավելորդ ցանկությունները: Շատ և բավական համարիր քեզ անհրաժեշտ կերակուրները, չափը մի անցիր և մի շվայտանա: Մարդը ճարպակալում է գիրությունից, և առատ ճարպից անօրինություններ են ելնում, ինչպես հարբեցողությունից՝ պիղծ անառակություններ. Աստված չի կամենում փործության տանել մարդուն, այլ՝ ազատել փործությունից և փրկել մահվանից: Քանզի նա, ով չխնայեց իր Որդուն, այլ ամենքիս համար մահվան մատնեց նրան, նրանով ամեն տեսակ բարիքներ է շնորհում բոլոր նրանց, ովքեր խնդրում են Իրենից»:

Քրիստոնեական հին ուղղափառ եկեղեցիները տարվա վեց ամիսները սահմանել են պահոց օրեր, իսկ մնացածները՝ ուտիքի:

Պահոց օրերը ըստ տոների և հավուր պատշաճի լինում են երկօրյա կամ օրական, շաբաթվա չորեքշաբթի և ուրբաթ օրերին: Առաքելական կանոնների համաձայն «չորեքշաբթին պահվում է Քրիստոսի մատնության հիշատակի և ուրբաթը՝ Քրիստոսի չարչարանքների համար»: Նախահայր Ադամի դրախտից վռնդվելու հիշատակին Սբ. Գր. Լուսավորիչի կողմից սահմանված 5-օրյա պահքը ստացել է «Առաջավորած պաս» անվանումը:

Մեկ շաբաթյա պահքերը կոչվում են շաբաթապահք: Եղիական, Հոգեգալստյան Պահքի օրերին սովորաբար սրբերի հիշատակություն չի կատարվում հայոց Առաքելական եկեղեցիներում, քանզի պահոց օրերը ապաշխարության օրեր են համարվում:

Ծննդյան, Զատիկի, Վարդավառի, Աստվածածնի և Սբ. Խաչի օրերը ստացել են «Տապավարներ» անունը:

Քառասունօրյա կամ Մեծ պասը նույնպես հաստատվել է առաքյալների կողմից. «Քառասուն օր պահեն չարչարանքների օրերից առաջ և ապա կատարեն Զատիկը» /կանոն առաքելոց/:

Քառասունօրյա և մյուս պասերին մարտիրոսված սրբերի ծնունդը չպետք է տոնել, այլ միայն շաբաթ օրերին:

Պսակադրություն, մատաղ և ծնունդ չպետք է անել:

Քրիստոնեական առումով պասը հանդիսանում է զղջումի, ապաշխարության և ինքնաքննման օրեր: Պահոց օրերը հոգևոր կրթության և դաստիարակության, գործած հանցանքների, քավության և թողության պահեր է ներշնչում անհատին: Պաս պահողը արտահայտում է իր հավատարմությունը Աստծուն: Այն հոգեկան իմաստով ապաշխարություն է նշանակում, որը հոգևոր հաշվետվություն է մեր խղճի և Աստծո առաջ:

Հին կտակարանի ու ավետարանի մեջ պաս նշանակում էր պարզապես կերակուրից զգուշանալ, չուտել, ծոմ պահել: Պողոս առաքյալի թույլտվությունը, որ բոլորովին անոթի մնալ չկարողացող տկարը կարող է մի քիչ բանջար ուտել, որը կատարյալ սնունդ չտվող կերակուր էր, սկսեց կամաց - կամաց ընդարձակվել և թեթև կերակուրներով սնվելը սկսվեց պաս կոչվել, և պասը դարձավ կերակուրների տեսակի վրա հիմնված ժուժկալություն:

Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը գրում է. «Առաջ միայն բանջարեղենները ներվեցին, հետո ընդեղենը, վերջապես բուսականներից քամված հյութը, ինչպես ձեթը, գինին և այլն: Մեր եկեղեցին այժմ պասի սահման է դրել բուսական արտադրությունները, միակ ու բացառիկ հավելված ընդունելով մեղրը, որը կենդանական կիթ է»:

Հին հայկական ըմպելիքները

Հին Հայաստանը հռչակված է եղել ընտիր ըմպելիքներով: Հայկական ըմպելիքների մասին առաջին անգամ հիշատակել է հույն պատմիչ Քսենոփոնը, որը Ք.ա. 401 թ. եղել է Հայաստանում, հայկական գարեջրի մասին գրել է. «...Կարասների մեջ կար գարուց պատրաստված գինի, որի երեսին լողում էին գարու հատիկներ: Կարասների մեջ կային նաև եղեգներ՝ մեծ ու փոքր, առանց ծնկի: Ծարավելու դեպքում մարդ պիտի այդ եղեգի ծայրը բերանին դներ և խմեր: Եվ այն շատ թունդ էր և շատ ախորժալի ըմպելիք»:

Բայց, իհարկե, հայկական ըմպելիքների նահապետը գինին է, որն ստանում են խաղողից:

Ավանդությունն ասում է, որ խաղողի առաջին որթը տնկվել է Մասիսի ստորին լանջին՝ Ակոռի գյուղում: Ակոռի գյուղի կողքի գետակներից մեկը կոչվել է Գինա գետ:

Ագաթանգեղոսը հայկական գինին համարում է «ըմպելիք քաղցր ու անուշ»: Հայերը գինին կոչել են ըմպելիքների թագուհի, խաղողի արյուն, ողկույզի դուստր:

Հին Հայաստանում գինուց բացի պատրաստել են թունդ խմիչք, որ կոչել են ցքի կամ օղի: Հիմա ցքի բառը գործածությունից դուրս է եկել, սակայն մեր նախնիները օղուն ցքի են կոչել, որ նշանակում է, թե այն օգտագործողի սիրտը կծակծկվի փշի նման: Եվ ծաղրել են այդ խմիչքն օգտագործողներին:

Չգրված մի օրենքով ցքի խմողները հալածվել են: Հարբեցողին կապել են ձիերի գավակներին և տարել գյուղից գյուղ և պտտեցրել այն տների առջևով, որտեղ ապրում էին հարբեցողների հարազատներն ու բարեկամները:

Ծանրութեթև անելով գինու դրական ու բացասական կողմերը՝ մեր հայրերը ժողովրդական իմաստությունների մի ամբողջ շարք խրատանի են ստեղծել: Ահավասիկ.

Գինուն հարցրին.

- Ավերա՞ծ է շատ, թե շինած:

Եվ գինին պատասխանեց.

- Շինածս չգիտեմ, ավերածս համրանք չունի:

Գինեմոլությունը խարազանող շատ թևավոր խոսքեր կան. Գինի խմողը կիարբի, կռիվ գնացողը կմեռնի: Ջուրն անուշ է, քան նռան գինին: Գինին մարդ չի մեռցնում, բայց շան օրի է գցում:

Հին Հայաստանում գինի են պատրաստել ոչ միայն խաղողից, այլև օշինդրից, վարդից, մինոտխից, հապալասից, սերկևիլից:

Մեր նախահայրերը ցքին պատրաստել են արմավի հյութից, հետագայում նաև հոնից, թթից, սալորից և այլ մրգերից: Ցքին կամ օղին համարվել է ամենակործանարարը: Այդ պատճառով ժողովուրդն ասել է. «Գինին ծաղր անող է, ցքին՝ կռիվ քցող»:

Հին Հայաստանում տարածված են եղել ավելի քան 400 տեսակ մրգահյութեր, դրանց մեջ ամենահռչակավորը և բուժիչը նռան հյութն է: Հայերը զանազան օշարակներ են պատրաստել ոչ միայն մրգերից, այլև տարբեր ծաղկահյութերից: Արքաների և թագուհիների համար ծաղիկներից պատրաստում էին ընտիր հյութեր, որոնք կոչվում էին անմահական հեղուկներ: Հայկական օշարակների թագուհին կենաց հյութն է, որի մեջ մեկտեղվում էին 40 բուրավետ ծաղիկների հյութերը:

Էջը կազմեց ԼԵՎՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ



Иное о детях Ноя

Корреспондент «Известий» знакомится с наукой, практикой и коньяком армянского народа

Из бывших союзных республик наиболее тесно связана с Россией Армения. Многие крупнейшие предприятия контролируются российскими компаниями, серьезные политики имеют пророссийскую ориентацию. Военная база в Гюмри не испытывает проблем, охрану границ с Турцией и Ираном несут российские пограничники. Несомненно, Россия хотела бы иметь такие тесные и дружественные отношения со всеми странами СНГ. На встрече с коллегами-президентами Дмитрий Медведев сказал, что приоритетами сотрудничества в СНГ должны стать науки и высокие технологии. В чем секрет близости России и Армении? На чем выстроены политические и человеческие отношения? Не может ли прийти в Армению очередная «оранжевая революция» и наступить охлаждение к России?

«Армянские и грузинские мужчины вылеплены из разного теста, — говорит Мкртыч Киракосян, которого в Ереване считают «ненастоящим армянином», потому что он приехал из Москвы. — Для русских мы на одно лицо, но мы разные. Грузины слишком много пьют и слишком часто поют. Поэтому ими руководят женщины. Мужчина в Армении не умеет так красиво себя показать, но он не может быть слабее женщины, потому что от мужчины зависит судьба Армении. Грузии всегда было легче, советское время ее совсем развратило. Если ты развратил женщину, не жалуйся, что она ведет себя как проститутка. Я так думаю...».

Мкртыч Киракосян вырос в селе, учился в обычной школе. Мать — агроном, отец — ветеринар, в горах среди пастухов-азербайджанцев он был единственным армянином. Сейчас вообразить невозможно, но в советское время не было ничего необычного в том, что сын колхозника из Армении закончил физфак и поступил в аспирантуру МГУ. Два года назад гражданин России Мкртыч Киракосян стал директором Армяно-российской горнорудной компании и с семьей переехал из Москвы в Ереван. Геологи дают прогноз, что недра Армении щедрее богатствами, чем любая Намибия. Я сам это по радио слышал...

АРМЯНЕ И НОБЕЛЕВСКАЯ ПРЕМИЯ

— Следующую Нобелевскую премию точно получит Юрий Оганесян, — говорит президент Академии наук Армении Радик Мартиросян. — Это великий ученый. Сколько новых химических элементов в Дубне открыл! Недавно — 117-й элемент! Мы испытываем гордость!

— О Нобеле Оганесяну говорят много лет, — сомневаюсь я. — Только не дают почему-то. И в чем ваша гордость, если после школы он сразу и насовсем уехал из Еревана в Россию?

— Армяне по миру рассеяны, но остаются армянами, — президент укоризненно качает головой. — Мы российского академика Оганесяна в армянские академики избрали. Раньше Нобеля не давали, потому что он правильные открытия неправильно делал. А теперь в команде — ученые из Америки и Израиля. Теперь премию дадут. Я так думаю.

Среди членов Академии наук Армении десятки российских ученых. Ни один из народов, населявших СССР, не представлен так щедро в Российской академии наук. Академию в Армении после войны создали ученые с мировым именем — директор Эрмитажа Иосиф Орбели и проректор Ленинградского университета Виктор Амбарцумян. Без помощи СССР наука в Армении не поднялась бы. Не было бы знаменитой Бюраканской обсерватории, в Институте физики не построили бы ускоритель, не возникли бы школы в геологии и сейсмологии, не шли бы нарасхват программисты. Президент Мартиросян был аспирантом у нобелевского лауреата Прохорова, вице-президент Юрий Шукурян — у пионера советской кибернетики академика Глушкова. Сегодня РАН и НАН ведут исследования по 70 программам, в Ереване открывается филиал МГУ, в российских вузах обучается около 100 студентов и аспирантов из Армении.

— Парадокс в том, что армян в мире знают по достижениям в науке и культуре. А в родной Армении эти области по зарплате — на последнем месте, — печалится президент Мартиросян. — Мы еще поднимемся. В этом году впервые на пожертвования диаспоры будет вручена самая крупная в СНГ научная премия Виктора Амбарцумяна в $500 тысяч.

— Наука Армении была в СССР на ведущих ролях, — говорит вице-президент РАН Николай Лаверов. — Сейчас от науки в Армении остались лоскуты. По космосу, где армяне были сильны, ничего нет. Исследования на мировом уровне ведутся вместе с нашими учеными.

— Пробиваю в Армении Национальную ядерную лабораторию по типу американских центров, — говорит академик Юрий Оганесян, с которым мы оказались в Ереване. — У трех министров и премьера побывал. Лаборатория займется передовыми технологиями — от ядерной медицины до оборонной тематики. Состояние медицины в Армении ужасает. Я уговорил власти выделить деньги на лучший томограф. Врачи в Армении — золото, но без оборудования они, как без рук.

В 1971 году первая международная конференция по проблеме поиска внеземных цивилизаций прошла в Бюракане. Амбиции науки в Армении астрономически снизились, но если спросить у любого торговца зеленью на рынке, что в стране следует развивать в первую очередь, ответ услышишь незамедлительно — науку. Водитель Самвел, который помогал мне передвигаться по Еревану, питает теплые чувства к российскому академику Лаверову, который в далеком 1988 году участвовал в ликвидации последствий страшного землетрясения в Спитаке, когда погибло не меньше 25 тысяч человек. Подозреваю: в России Лаверова и Оганесяна знают меньше, чем в Армении...

АРМЯНЕ И АТОМНАЯ БОМБА

